2026, ՓԵՏՐՎԱՐ Բ, ԹԻՎ 4 (696)

Տիրոջդ կամքն եղիցի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Մեծ Պահքի առիթով



Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Հոգու նվիրական ապրումներով վերստին մուտք ենք գործում Մեծ Պահքի շրջան: Ներաշխարհի քննությամբ, զղջման և ապաշխարության սրբարար ճանապարհով ընթանալու ենք դեպի բերկրալի և լուսավոր տոնը մեր Փրկչի Սուրբ և Հրաշափառ Հարության: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի քարոզչությունն սկսվեց ապաշխարության կոչով. «Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթ. 4.17): Տերունական այս հրավերին ընդառաջումն է, որ պահքը աղոթական իր խորհրդով զորացնում ու մաքրագործում է հոգին, ամրացնում որդիական կապը Երկնավոր Հոր հետ: Ջերմեռանդ աղոթքը պիտի լուսավորի պահեցողության ընթացքը, չափավորությունը զարդարի հավատավոր անձի կենցաղավարությունը, նաև ներողամտություն դրսևորի զղջացող հոգին իր նմանի հանդեպ, ինչպես որ քաղցրորեն հորդորում է Տերը. «Ներեցե՛ք, որպեսզի ձեր Հայրն էլ, որ երկնքում է, ների ձեզ ձեր հանցանքները» (Մարկ. 11.25):

Սիրելինե՛ր, մեր օրերում, երբ ազգային ու հայրենական կյանքի խնդիրների, մեր Սուրբ Եկեղեցու դեմ տարատեսակ հարձակումների մտահոգություններով ալեկոծ են մեր հոգիները, խաղաղություն գտնենք մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որի միջոցով հաշտվեցինք Աստծո հետ: Ապրենք ազգի ու հայրենիքի նկատմամբ ամենայն նվիրումով, մեր ինքնության ու սրբազան արժեքների հանդեպ անբեկանելի նախանձախնդրությամբ, մեր Մայր Եկեղեցուն հավատարիմ մնալու հաստատակամությամբ:

Աղոթենք միասին, որ պահեցողության խորհրդավոր այս ժամանակամիջոցը համընդհանուր զղջման և ապաշխարության գեղեցիկ առիթ լինի ամենքիս համար, որպեսզի, մեր սխալներն ու թերություններ գիտակցելով և շտկելով, կարողանանք միասնաբար հաղթահարել բոլոր նեղություններն ու դժվարությունները: Թող Բարձրյալն Աստված խաղաղություն հաստատի աշխարհում, մեր հայրենիքում ու մեր սրտերում և բարօրության ու շինության մեջ պահի ու պահպանի մեր ազգը, մեր պետությունն ու մեր Սուրբ Եկեղեցին. ամեն:

Ավստրիայի Սանկտ Փյոլթըն քաղաքում մեկնարկեց Եպիսկոպոսաց հավաքը

Փետրվարի 17-ին Ավստրիայի Սանկտ Փյոլթըն քաղաքում իր աշխատանքներն սկսեց Եպիսկոպոսաց հավաքը, որին մասնակցում էին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ամենայն Հայոց Կաթողիկոսության քսանհինգ արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ՝ այդ թվում Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքություններից:

Առավոտյան ժողովականները մասնակցեցին Արևագալի ժամերգությանը: Հոգևոր խորհրդածությունից և աղոթական առանձնացումից հետո՝ հետմիջօրեին, մեկնարկեց հավաքը:

Եպիսկոպոսաց հավաքը բացվեց Տերունական աղոթքով, որին հաջորդեց միասնության մասին Պողոս առաքյալի՝ եփեսացիներին ուղղված նամակից ընթերցումը: Ապա ժողովականներին հայրական իր խոսքն ու պատգամն առցանց հղեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Այնուհետև մասնակիցներին իրենց ուղերձը հղեցին նաև Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Երուսաղեմի Հայ Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանը և Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանը:

Օրակարգի քննարկումից և հաստատումից հետո ընտրվեց դիվանը՝ վարելու Եպիսկոպոսաց հավաքի հետագա աշխատանքները:

Նույն օրը Սանկտ Փյոլթընի Մայր Տաճարում եպիսկոպոսաց մասնակցությամբ տեղի ունեցավ Երեկոյան ժամերգություն, որի առիթով նրանց իր ողջույնի խոսքը հղեց Կաթոլիկ Եկեղեցու Սանկտ Փյոլթընի թեմի առաջնորդ Գերաշնորհ Ալոիս եպիսկոպոս Շվարցը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ամենայն Հայոց Կաթողիկոսության Եպիսկոպոսաց հավաքը հայտարարությամբ

2026 թ. փետրվարի 17–19-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով և օրհնությամբ Ավստրիայի Սանկտ Փյոլթըն քաղաքում գումարված Եպիսկոպոսաց հավաքն ավարտեց իր աշխատանքները:

Հավաքի արդյունքում ժողովականները հանդես եկան հայտարարությամբ.

«Մենք՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության և Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության քսանհինգ եպիսկոպոսներս, գոհություն և փառք ենք մատուցում Երկնավոր Տիրոջը, որ շնորհը պարգևեց մեզ Մեծի Պահոց շրջանի մեկնարկին աղոթական միությամբ վերանորոգելու Իջման Սուրբ Սեղանի առջև կնքած եպիսկոպոսական մեր ուխտը և հոգևոր առանձնացումով զորանալու մեր սրբազան կոչման մեջ՝ ներկա խռովահույզ ժամանակներում առավել նախանձախնդրությամբ և պատասխանատվությամբ շարունակելու արդյունավորել մեր առաքելությունը՝ ի խնդիր Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառության, աշխարհասփյուռ հավատավոր մեր ժողովրդի հավատքի ամրապնդման և հոգևոր կյանքի զորացման:

Որդիական մեր շնորհակալությունն ենք հայտնում Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որի հայրական հրավերով հայրենիքում և սփյուռքում ծառայող եպիսկոպոսներս համախմբվել ենք՝ միասնաբար խորհրդածելու Հայոց Եկեղեցու առջև ծառացած մարտահրավերների շուրջ և լուծումներ գտնելու դրանց հաղթահարման ուղղությամբ:

Խոր մտահոգությամբ ու դատապարտությամբ ենք արձանագրում, որ քրեական անհիմն հետապնդման պատճառով արգելափակվեցին Հայոց Հովվապետի և մեր վեց եպիսկոպոս եղբայրների ելքը Հայաստանից և մասնակցությունը Եկեղեցու կյանքում կարևոր նշանակություն ունեցող այս պատկառելի հավաքին: Արհեստականորեն ստեղծված այս խոչընդոտի պատճառով մենք հարկադրված էինք տեսակապի միջոցով ունկնդիր լինել Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական պատգամին: Սույն հավաքին իրենց ուղերձներն էին հղել նաև Նվիրապետական մեր մյուս Աթոռների գահակալները՝ Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Երուսաղեմի Հայ Պատրիարք Նորին Ամենապատվություն Տեր Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանը և Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Նորին Ամենապատվություն Տեր Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանը:

Եպիսկոպոսաց հավաքը իր եռօրյա նիստերի ընթացքում քննության առավ օրակարգում ընդգրկված հետևյալ նյութերը՝

– «Եկեղեցու առաքելությունը արդի ժամանակաշրջանում և առկա մարտահրավերները հայրենիքի և սփյուռքի մեջ» (զեկուցող՝ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյան),

– «Եկեղեցի–պետություն հարաբերությունների ներկա կացությունը և Եկեղեցու շուրջ ստեղծված իրավիճակը Հայաստանի մեջ» (զեկուցող՝ Տ. Գրիգոր եպիսկոպոս Խաչատրյան),

– «Եկեղեցու ինքնավարության պաշտպանությունը քաղաքական շահարկումներից և ստեղծված իրավիճակի հաղթահարման ուղիները» (զեկուցող՝ Տ. Աշոտ եպիսկոպոս Մնացականյան):

Եղբայրական սիրո ու փոխհասկացողության մթնոլորտում բովանդակային, կառուցողական քննարկումների արդյունքում Եպիսկոպոսաց հավաքի մասնակիցներս վճռականորեն վերահաստատում ենք մեր Սուրբ Եկեղեցու ավանդությամբ ու բազմադարյա փորձառությամբ նվիրագործված կարգերն ու սկզբունքները հոգեփրկչական իր առաքելության, այլև համազգային և հայրենական կյանքի առնչությամբ՝ ի մասնավորի արձանագրելով, որ՝

ա. Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությամբ հիմնադրված Հայոց Եկեղեցու գլուխը Հիսուս Քրիստոս է (Եփես. Ա 22): Տերունահաստատ այս կառույցը ղեկավարվում է Սուրբ Գրքով, Եկեղեցու վարդապետությամբ ու կանոններով և առաքելական հաջորդականության սկզբունքով՝ Հայոց Հայրապետների հովվապետությամբ: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելությունը հայրենիքում և սփյուռքում ներառում է ազգիս զավակների հոգևոր խնամքն ու քրիստոնեական դաստիարակությունը, ազգային և հոգևոր ինքնության պահպանումը:

բ. Բազմադարյա իր պատմության հոլովույթներում Հայոց Եկեղեցին՝ որպես «կենդանի Աստծո Եկեղեցի, սյուն և հաստատություն ճշմարտության» (Ա Տիմ. Գ 15), ժամանակի պահանջներին համահունչ, ներքին բարենորոգությամբ միշտ կենսունակ է պահել Քրիստոսի Ավետարանը քարոզելու և ժողովրդին դեպի փրկություն առաջնորդելու իր բուն առաքելությունը:

գ. Միաժամանակ Հայոց Եկեղեցին՝ որպես համազգային նշանակության հնագույն հաստատություն, մշտապես ջատագովն է եղել հայոց անկախ պետականության գոյության և առավելագույն չափով սատարել և այսօր ևս շարունակում է նպաստել նրա զորացմանն ու առաջընթացին՝ անխախտ համոզումով, որ հայրենի պետությունն է պաշտպանն ու երաշխավորը հայ ժողովրդի հարատևության և ազգային իղձերի իրականացման:

➥ էջ 2



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՅԴ պատվիրակությանը

Փետրվարի 20-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց տարբեր երկրներից ժամանած Հայ հեղափոխական դաշնակցություն ղեկավար կազմի ներկայացուցիչներին՝ գլխավորությամբ ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանի:

Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց ներկաներին ազգանվեր իրագործումների առնչությամբ՝ պատգամելով շարունակել ջանքեր գործադրել հայրենիքի զորացման, ազգի զավակների արժանապատիվ ու ապահով կյանքի կերտման և մերօրյա մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց ազգային-եկեղեցական կյանքը հուզող խնդիրներին, իշխանության կողմից իրականացվող հակաեկեղեցական գործողություններին, ինչը խաթարում է եկեղեցականների բնականոն առաքելությունը և հավտացյալների հոգևոր կյանքը:

Նորին Սրբությունը հաստատեց, որ հակառակ բոլոր դժվարությունների՝ Եկեղեցին և հոգևոր դասն անշեղորեն շարունակելու են իրենց հոգեփրկչական ու ազգապահպան առաքելությունը՝ ի նպաստ հայոց կյանքի պայծառության և բարօրության:

Պատվիրակության անդամներն իրենց զորակցությունը հայտնեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Վեհափառ Հայրապետին՝ կարևորելով Հայոց Եկեղեցու դարավոր ավանդն ու առաքելությունը հայոց պետականության զորացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ամենայն Հայոց Կաթողիկոսության Եպիսկոպոսաց հավաքը հանդես եկավ հայտարարությամբ

↩ էջ 1

Այդ ճանապարհին Հայոց Եկեղեցին երբեք չի ծառայել և չի ծառայում օտար ուժերի կամ արտաքին շահերի, այլ իր հավատարմությունն անսակարկ պահել է բացառապես հայ ժողովրդին, նրա պետականությանը և ազգային ինքնության պահպանությանը:

Այս համատեքստում եպիսկոպոսաց դասը խոր մտահոգություն է հայտնում Եկեղեցի–պետություն հարաբերությունների անցանկալի ներկա կացության առնչությամբ և վտանգաշատ այս իրադրության մեջ կոչ անում ՀՀ իշխանություններին՝

— դադարեցնել Եկեղեցու հանդեպ հալածանքները և հարգել Եկեղեցու՝ դարերով ամրագրված ինքնիշխանությունն ու ինքնավարությունը՝ Եկեղեցի–պետություն հարաբերությունները խարսխելով փոխադարձ հարգանքի, իրավասությունների հստակ տարանջատման և ազգային շահի առաջնահերթության վրա,

— վերջ դնել շինծու մեղադրանքներով ու զրպարտություններով եկեղեցականների ու ազգընտիր Ամենայն Հայոց Հայրապետի նկատմամբ բռնաճնշումներին,

— ազատ արձակել կալանավորված չորս սրբազան մեր եղբայրներին, քահանային, ինչպես նաև Եկեղեցուն ի պաշտպանություն հանդես եկած հայորդիներին,

— գործել բացառաբար ՀՀ Սահմանադրությամբ, օրենսդրությամբ և միջազգային օրենքներով և հավատարիմ մնալ հռչակված ժողովրդավարական սկզբունքներին՝ երաշխավորելով երկրում խղճի, կրոնի և դավանանքի ազատությունը, պառակտման փոխարեն ապահովելով հասարակական համերաշխություն,

— առկա խնդիրներն ու հակառակությունները փարատել երկխոսության ոգով՝ առանց նախապայմանների, զերծ մնալով անհեռանկար վերջնագրային խոսույթից:

Եպիսկոպոսաց հավաքի մասնակիցներս միաժամանակ հորդորում ենք խոտորյալ ութ սրբազաններին՝

— գործել Սուրբ Էջմիածնի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդեպ հավատարմության ուխտի և ծառայական կոչման գիտակցությամբ,

— ներեկեղեցական կյանքին առնչվող խնդիրներն արծարծել և լուծել բացառապես Եկեղեցու լիազոր ատյաններում,

— ձեռնպահ մնալ հակականոնական գործողություններից, ջլատող քայլերից ու անջատողական դրսևորումներից, որոնք սպառնում են առաջացնել հերձված՝ տկարացնելով Եկեղեցու առաքելությունը մեր հավատավոր ժողովրդի կյանքում: Այս շրջագծում Սուրբ Պատարագներին Վեհափառ Հայրապետի անվան հիշատակության հատվածի զեղչումը որևէ հիմնավորմամբ եկեղեցաբանորեն անընդունելի է և ուղիղ հարված՝ Սուրբ Էջմիածնի միաբանությանը և Հայոց Եկեղեցու միասնությանը:

Անընդունելի նկատելով արտաքին պարտադրանքի ներքո բարենորոգման որևէ շարժում՝ հրամայական անհրաժեշտություն ենք նկատում Հայ Եկեղեցու առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման և բարեկարգության աշխատանքներն իրականացնել միմիայն Եպիսկոպոսաց ժողովում և եկեղեցական կանոնական բարձրագույն մարմիններում:

Հայ Եկեղեցու եպիսկոպոսներս վերահաստատում ենք մեր հավատարմությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ որպես տեսանելի խորհրդանիշ և երաշխիք Եկեղեցու միության, հաշտության ու համերաշխության, քանզի «Աստված խռովության Աստված չէ, այլ՝ խաղաղության» (Ա Կորնթ. ԺԴ 33):

Օրհնությամբ Հայոց Հովվապետի՝ հանձնառու ենք եպիսկոպոսաց ժողովի պարբերական գումարումով նպաստել Եկեղեցու առջև ծառացած մարտահրավերների քննությանն ու հաղթահարմանը, մեր ժողովրդի կյանքում մեր հոգևոր սպասավորության առավել զորացմանը:

Մեր հորդորն ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու ուխտապահ հոգևոր դասին՝ անսասան մնալու իրենց կոչման և ծառայության մեջ՝ «օրինակ լինելով հավատացյալներին՝ խոսքով, վարմունքով, սիրով, հավատով, մաքրությամբ» (Ա Տիմ. Դ 12):



Եկեղեցին պիտի անշեղորեն շարունակի իր սրբազան առաքելությունը՝ անկախ արտաքին ճնշումներից՝ հավատարիմ մնալով Սուրբ Ավետարանին և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ուղղափառ վարդապետությանը:

Այս առիթով կոչ ենք ուղղում նաև հավատավոր մեր ժողովրդին, որպես Քրիստոսով «մեկ մարմին և մեկ հոգի» (Եփես. Դ 4), հավատարիմ ու համախումբ մնալու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու շուրջ և աղոթակցությամբ ու նվիրվածությամբ, բարի գործերով շենացնելու և պայծառացնելու ազգային ու հոգևոր մեր անդաստանները:

Խորապես մտահոգված լինելով Բաքվում Արցախի ղեկավարության նկատմամբ իրականացված կեղծ դատավարությամբ և անօրինական վճիռներով՝ մեր կոչն ենք ուղղում միջազգային հանրությանը և Քույր Եկեղեցիներին՝ շարունակելու ջանքեր ներդնել պատանդառված հայորդիների շուտափույթ ազատ արձակման ուղղությամբ:

Ի խորոց սրտի մեր աղոթքն է, որ Բարի Աստված, բարեխոսությամբ Ս. Աստվածածնի և ամենայն սրբոց, անսասան և անվրդով պահի և պահպանի մեր Սուրբ Եկեղեցին, զորացնի հայոց անկախ պետականությունը, խաղաղության և բարօրության մեջ առաջնորդի կյանքը աշխարհասփյուռ հայոց ազգի: Հայցում ենք, որ Տերը խաղաղություն պարգևի համայն աշխարհին, բոլոր ազգերին ու ժողովուրդներին:

«Վերջապես, եղբայրք, ուրախ եղեք, կատարյալ եղեք, մխիթարվեցեք, միաբան եղեք և խաղաղություն արեք. և սիրո ու խաղաղության Աստվածը ձեզ հետ լինի» (Բ Կորնթ. ԺԴ 11)»:

Տ. Խաժակ արքեպս. Պարսամյան
Տ. Հովնան արքեպս. Տերտերյան
Տ. Վիգեն արքեպս. Այքազյան
Տ. Արամ արքեպս.Աթեշյան
Տ. Եզրաս արքեպս. Ներսիսյան
Տ. Աշոտ եպս. Մնացականյան
Տ. Արմաշ եպս. Նալբանդյան
Տ. Արարատ եպս. Գալթագճյան
Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյան
Տ. Հովակիմ եպս. Մանուկյան
Տ. Տաթև եպս. Հակոբյան
Տ. Նարեկ եպս. Բերբերյան
Տ. Աբգար եպս. Հովակիմյան
Տ. Սերովբե եպս. Իսախանյան
Տ. Դանիել եպս. Ֆըլնտրգյան
Տ. Տիրան եպս. Պետրոսյան
Տ. Օշական եպս. Գյուլգյուլյան
Տ. Թեոդորոս եպս. Ջաքարյան
Տ. Մեսրոպ եպս. Պարսամյան
Տ. Կորյուն եպս. Բաղդասարյան
Տ. Կիրակոս եպս. Դավթյան
Տ. Առեմ եպս. Շահենյան
Տ. Գրիգոր եպս. Խաչատրյան
Տ. Պարթև եպս. Բարսեղյան
Տ. Խորեն եպս. Առաքելյան

Ի Տեր ննջեց Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգիսյանը



Խոր ցավով հայտնում ենք, որ փետրվարի 20-ին, կյանքի 85 տարում, երկարատև հիվանդությունից վախճանվել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության երիցագույն միաբաններից Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգիսյանը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը խորապես սգում են բարեհիշատակ Սրբազան Հոր մահը և աղոթում նրա հոգու հանգստության համար:

Փետրվարի 23-ին՝ ժամը 17:00-ին, Սուրբ Գայանե վանքում տեղի ունեցավ Եկեղեցու կարգը, իսկ փետրվարի 24-ին՝ ժամը 11:00-ին, հընթացս Սուրբ Պատարագի, կատարվեց հանգուցյալ Սրբազանի վերջին օծումը, ապա՝ հուղարկավորության արարողությունը:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Կատարվեց հոգեհանգստյան կարգ Սումգայիթի կոտորածի զոհերի հոգիների խաղաղության համար

Փետրվարի 27-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, Միածնաէջ Մայր Տաճարում Հանգստյան ժամերգության ավարտին կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ 1988 թ. Ադրբեջանի իշխանությունների կողմից կազմակերպված սումգայիթյան ջարդերի զոհերի:

Եկեղեցականաց դասը և ներկա հավատավոր ժողովուրդը աղոթք բարձրացրին առ Աստված կոտորածի ենթարկված անմեղ հայորդիների հոգիների խաղաղության և հանգստության համար:

Նոր նշանակում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ Հոգեշնորհ Տ. Հովսեփ աբեղա Հակոբյանը, ազատվելով Հառիճի Թրբանճյան հոգևոր ընծայարանում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Արգենտինայի հայոց թեմում:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Յակոբ Պատրիարք Նալեան.
Ապաշխարութեան Խորհուրդի մասին

Ապաշխարութիւնը գործած մեղքերը լալը եւ այլևս զանոնք չգործելն է: Դարձեալ՝ ապաշխարութիւնը մեղքերու չափին համաձայն՝ կամաւորապէս պատիժ կրելն է. որովհետև ով որ կ'ապաշխարէ կամ իր գործած չարիքը կու լայ, կամ՝ այդ ողբալի չարիքը չի գործեր եւ կամ մեղքերուն համաձայն՝ պատիժը կամաւորապէս կը կրէ: Քանի որ, եթէ մեղաւորը այս կեանքին մէջ մեղքերուն պատիժը կամաւորաբար չկրէ, հանդերձեալին մէջ ակամայ կը կրէ եւ չի՛ օգտուիր:

Արդ, ապաշխարութիւնը զանազան կերպերով է. որովհետև ապաշխարութիւն կայ, որ կեղծ կ'ըսուի, կեղև ունի, սակայն մէջը պարապ է. այսպէս էր Կայէնի ապաշխարութիւնը, որ միայն աչքն ու երեսը խոնարհեցուց եւ ո՛չ թէ սիրտը. այդ պատճառով ալ Աստուած ըսաւ, թէ՝ ուղիղ չես մատուցեր:

Երկրորդ՝ սուտ ապաշխարութիւն, որ մարդ ապաշխարելէն ետք դարձեալ նոյն չարիքը կը գործէ. ինչպէս Սաուղը, որ թէեւ Դաւիթ մարգարէին յաճախ մեղայ ըսաւ, բայց միշտ կը ջանար սպաննել զինք: Նաեւ Սիմոն Կախարդը առաքեալներուն ըսաւ, թէ՝ ինծի համար Աստուծոյ աղաչեցէք, որպէսզի վրաս չարիք չգայ, սակայն ինք չդադրեցաւ չարիք գործելէ, ինչպէս նաեւ ինք ջանք չըրաւ, այլ ուրիշներուն պատուիրեց ապաշխարել իր փոխարէն, այդ պատճառով ալ չարդարացաւ, քանի որ չըսաւ, թէ՝ ես ալ ձեզի հետ Աստուծոյ աղաչեմ, այլ թէ՝ դո՛ւք աղաչեցէք ինծի համար:

Երրորդ՝ մէկուն [ապաշխարութիւնը] ուշ կ'ըլլայ, ինչպէս էր Աքարի ապաշխարութիւնը [կարդա՛ Յես. 7-րդ գլուխ], որ մեղքը ծածուկ ըլլալով չխոստովանեցաւ, այլ երբ յայտնի եղաւ մեղքը, այն ատեն մեղայ ըսաւ, սակայն թողութեան փոխարէն քարկոծուեցաւ: Այսպէս էր նաեւ Սաուղի ու Յուդայի մեղան: Բայց թշնամին, որ դառն կը հասնի, տարբերութիւն չի՛ դներ հարուստին ու աղքատին միջև. ուստի Յուդան ինքզինք կախեց ակամայ ապաշխարելով եւ չարդարացաւ:

Չորրորդ՝ մէկուն [ապաշխարութիւնը] բռնադատուած է, որով մարդը ակամայ կ'ապաշխարէ՝ տեսնելով, թէ փորձութիւնը շրջապատեց զինք: Ինչպէս կ'ըսէ Դաւիթ մարգարէն, շատցան անոնց հիւանդութիւնները, որ ասկէ ետք յաճախակի պիտի ըլլան [Սաղմ. 15.4]: Իսկ ինքն իր համար կ'ըսէր, թէ՝ դարձեալ ինկայ թշուառութեան մէջ, որովհետև փուշերը ծակեցին զիս [Սաղմ. 31.4]: Այսինքն՝ Նաթան մարգարէին յանդիմանութիւնները, իբրև փուշ մտան Դաւիթի սիրտին մէջ՝ շնութեան եւ մարդասպանութեան պատճառով:

Հինգերորդ՝ մէկուն անօրէն ապաշխարութիւն է, ինչպէս Յուդայինը, որ ճշմարիտ Քահանայապետը՝ զՔրիստոս, ձգեց եւ գնաց ու մեղայ ըսաւ սուտ քահանայապետներուն, որով հոգիով ու մարմինով դատապարտուեցաւ: Նաեւ Աստուծոյ դէմ մեղանչեց, եւ Աստուած Իրմէ հեռացուց՝ պատռեց զայն, եւ ան գնաց թշնամիները Աստուած դաւանեցաւ ու չարդարացաւ. այսպէս է կարգ մը մարդոց ապաշխարութիւնը, որ ոմանց կը զրկէ եւ ոմանց ալ ողորմութիւն կու տայ:

Վեցերորդ՝ մէկուն անկարողութենէ [բխած ապաշխարութիւն է], ինչպէս մարդ մը մեղայի կու գայ, երբ այլևս չի կրնար մեղանչել, որով ո՛չ թէ ինք մեղքը կը ձգէ, այլ մեղքը զինք կը ձգէ:

Եօթներորդ՝ մէկուն յուսահատ ապաշխարութիւն է, ինչպէս դատապարտեալներուն ապաշխարութիւնն է դժոխքին մէջ, որոնք տանջանքներու կսկիծէն կու լան եւ կ'ողբան եւ ոչինչով կ'օգտուին, ինչպէս կ'ըսէ Սողոմոն Իմաստունը. անոնք իրենց հոգիի նեղութենէն ճնշուած՝ հոգոց պիտի հանեն ու զղջալով պիտի ըսեն [տե՛ս Իմաստ. 5.3]:

Ութերորդ՝ սնափառութեան ախտէն կատարուածը, ինչպէս էր Եսաւի ապաշխարութիւնն ու լալը, որ որկրամոլութեամբ անդրանկութիւնը կորսնցուց ու լալով օրհնութիւն խնդրեց սնափառութեան պատճառով եւ ոչինչով օգտուեցաւ:

Իններորդ՝ ձևական, ակամայ եւ սուտ ապաշխարութիւն, ինչպէս էր փարաւոնի ապաշխարութիւնը, որ հարուած ստանալով՝ կը կակուղնար, սակայն հարուածներէն ազատելով՝ կը կարծրանար. պատիժը կը կրէր՝ մեղայ կ'ըսէր, եւ երբ պատիժէն ազատէր, կը քարանար:

Իսկ մեղքերու ճշմարիտ ապաշխարութիւնը, ինչպէս նաեւ Աստուծոյ սիրտը դառնացնելուն եւ հայրենի գաւառէն՝ Երկինքի Արքայութենէն հեռանալուն համար [ապաշխարելը] լալն է: Այսպիսի ապաշխարութեամբ մը արդարացան Դաւիթ մարգարէն ու Մարիամ Մագթաղենացին: Որովհետև Դաւիթ, մեղայ ըսելէ բացի, Նաթան մարգարէէն լսեց, թէ՝ Տէրը մեղքերդ անցուց քեզմէ [վրայէդ]: Իսկ Մարիամ Մագթաղենացին, որ արցունքներով Քրիստոսի ոտքերը լուաց, Քրիստոսէ լսեց, թէ՝ մեղքերդ ներուած թող ըլլան: Պետրոս առաքեալը, որ դառնապէս լացաւ ուրացութեան մեղքը, յարութենէն ետք Քրիստոս այր մարդոց մէջ առաջինը իրեն երևցաւ ու մխիթարեց:



Ռեմբրանդտ վան Ռեյն. «Անառակ որդու վերադարձը», 1666—1669 թթ.

Տե՛ս, թէ ճշմարիտ ապաշխարութիւնը՝ առիւծը՝ զԱստուած, ինչպէս խոնարհ Գառն կ'ըսէ եւ զարհուրելի Դատաւորը՝ գթած Հայր կ'ըսէ: Հետևաբար, սիրելի՛ եղբայր, մի՛ յուսահատիր, քանի որ Աստուած քաղցր է ապաշխարողներուն նկատմամբ. չ'ամչցար աղտոտուելէ, մի՛ ամչնար լուացուելէ:

Տակաւին, ապաշխարութիւնը պէտք է դառն ու լեղի ըլլայ, որովհետև հոգիի լաց է, ինչպէս անդրանիկ եւ միակ զաւակ կորսնցուցած մօր սուգը: Անդրանիկ [մէկ հատիկ] զաւակիդ համար սո՛ւգ ըրէ, կ'ըսէ քեզի Երեմիա մարգարէն:

Երկրորդ՝ ապաշխարութիւնը պէտք է կամաւոր ըլլայ, քանի որ Սուրբ Գրիգոր Նարեկացին կ'ըսէ, թէ՝ ակամայ եղածը կատարեալ սէր չէ եւ ոչ ալ կատարեալ առողջութիւն, որովհետև ուրախութեամբ պէտք է ընենք զայն, որ յաւիտենականութեան ժառանգորդներ ենք:

Երրորդ՝ պէտք է կատարեալ ըլլայ. ապաշխարութիւնը այն ատեն կատարեալ կ'ըլլայ, երբ զղջումով, խոստովանութեամբ եւ հատուցումով կ'ըլլայ. իսկ հատուցելը բոլոր մեղքերէն կամաւորաբար քաշուիլն է:

Չորրորդ՝ պէտք է փութով ըլլայ, ինչպէս կ'ըսէ Սիրաք Իմաստունը, մի՛ դանդաղիր Տիրոջ դառնալու:

Հինգերորդ՝ ապաշխարութիւնը սրտանց պէտք է ըլլայ, ինչպէս կ'ըսէ Ամովս մարգարէն (ո՛չ թէ Ամովս, այլ Յովէլ մարգարէն.— *Վ. Ք.*). ձեր ամբողջ սիրտով Աստուծոյ դարձէք, պահքով, լալով ու ողբով [տե՛ս Յովէլ 2.12]. նինուէացիները այսպէս ապաշխարեցին:

Վեցերորդ՝ ապաշխարութիւնը պէտք է համբերութեամբ ու յարատևութեամբ ըլլայ, ինչպէս ըսաւ Քրիստոս, թէ՝ ով որ համբերէ (ապաշխարութեան մէջ.— նշումը Նալեան Պատրիարքինն է), ան պիտի ապրի [Մատթ. 24.13]:

Եօթներորդ՝ ապաշխարութիւնը յետաձգելի չէ, ինչպէս անառակ որդին մտածեց իր խեղճութեան մասին ու ըսաւ, թէ՝ ելլեմ ու երթամ հօրս մօտ, եւ անմիջապէս եկաւ հօր մօտ ու ըսաւ, թէ՝ մեղանչեցի երկինքին ու քու առջևդ [կարդա՛ Ղուկ. 15.11—32]:

Ութերորդ՝ խոնարհութեամբ եւ սիրտի մորմոքումով, ինչպէս մաքսաւորը կը ծեծէր իր կուրծքը եւ գետնին նայելով՝ գլուխը խոնարհեցուցած, կ'ըսէր. Աստուա՛ծ, քաւէ՛ մեղաւորիս. եւ իր տուն գնաց արդարացած [տե՛ս Ղուկ. 18.13—14]:

Իններորդ՝ ապաշխարութիւնը անմիջապէս պէտք է ըլլայ: Անմիջապէսը այն է, որ յանկարծ բարի մտածում մը կու գայ մարդուս միտքին՝ թէ խոստովանիմ, մարդ այդ առիթը պէտք չէ փախցնէ. ով գիտէ, թերևս այդ դրդումը Աստուծմէ է, որով եթէ մարդ այդ պահը անտեսեց, կրնայ ըլլալ, որ յետոյ կամենայ, բայց առիթ չունենայ:

Հետևաբար Քրիստոս ըսաւ, թէ այնքան ատեն, որ լոյսը ձեզի հետ ունիք, գացէք լոյսին, որպէսզի խաւարը չտիրէ ձեզի [Յովհ. 12.35], որովհետև գիշերը կու գայ, երբ ո՛չ ոք կրնայ գործել: Ուստի վարդապետները կ'ըսեն. ժամանակ կու գայ, երբ կը կամենաս զղջալ, սակայն չես կրնար, որովհետև երբ կրնայիր, չկամեցար:

Արդ, ապաշխարութիւնը բազմաթիւ բարութիւններու պատճառ կ'ըլլայ:

Նախ՝ քանի որ զԱստուած կը հաշտեցնէ, ինչպէս մարգարէն կ'ըսէ. հաշտուած եմ քեզի հետ տառապողդ ու խախտուածդ [տե՛ս Ես. 57.14—20, Սաղմ. 146.3]:

Երկրորդ՝ հինցածը վերստին կը նորոգէ, ինչպէս յայտնի է անառակ որդիի նոր հագուստէն [Ղուկ. 15.22]:

Երրորդ՝ զԱստուած եւ հրեշտակները կ'ուրախացնէ, քանի որ երկինքի մէջ ուրախութիւն կ'ըլլայ մէկ մեղաւորի համար, որ կ'ապաշխարէ [Ղուկ. 15.7]:

Չորրորդ՝ տառապեալն ու յոգնածը կը հանգստացնէ. Ինծի՛ եկէք բոլորդ՝ յոգնածներ եւ ծանրաբեռնուածներ, եւ ես հանգիստ պիտի տամ ձեզի, կ'ըսէ Քրիստոս [Մատթ. 11.28]:

Հինգերորդ՝ Աստուծոյ սուրը յետ կը դարձնէ, ինչպէս որ ապաշխարող Դաւիթին համար Աստուած հրեշտակին ըսաւ, թէ՝ սուրդ իր պատեանը դարձուր [Ա. Մնաց. 21.27]:

Վեցերորդ՝ գերութենէ կը փրկէ, ինչպէս Մանասէ թագաւորը դարձուց իր թագաւորութեան [Բ. Մնաց. 33]:

Եօթներորդ՝ դրախտ կը տանի, ինչպէս աջակողմեան աւազակը [Ղուկ. 23.43]:

Ութերորդ՝ մաքսաւորը աւետարանիչ կ'ընէ, ինչպէս Մատթէոսը, եւ հալածիչը՝ առաքեալ, ինչպէս Պօղոսը:

Իններորդ՝ մեռած հոգին կը կենդանացնէ, ինչպէս Աստուած ըսաւ, մեղաւորը եթէ դարձի գայ, ապրելով պիտի ապրի ու պիտի չմեռնի [Եզեկ. 18.21]:

Տասներորդ՝ մարդս առաքինութեան զանազան պտուղներով կը զարդարէ, ինչպէս ըսաւ Ս. Յովհաննէս Մկրտիչը. ասկէ ետք ապաշխարութեան արժանի գործեր կատարեցէ՛ք [Մատթ. 3.8]:

Տասնմէկերորդ՝ մարդուն ժամանակաւոր կեանք կու տայ, ինչպէս Եզեկիա թագաւորին տասնհինգ տարի տուաւ [Դ. Թագ. 20.1—6]:

Տասներկրորդ՝ Աստուծոյ պատկերը կը նորոգէ [մարդուն մէջ], ինչպէս յայտնի է անառակ որդիի մատանիէն [Ղուկ. 15.22]. սատանային գլուխը կը կոխէ, ինչպէս յայտնի է ոտքերու կօշիկներէն [Ծննդ. 3.15]. արժանի կ'ընէ Քրիստոսի մարմինին եւ արիւնին, ինչպէս յայտնի է պարարտ եզէն. կորսուածը կը գտնէ [տե՛ս Ղուկ. 15.4—6]. մեռածը կը կենդանացնէ, ինչպէս ըսաւ, որովհետև այս որդիս մեռած էր եւ ողջնացաւ, կորսուած էր եւ գտնուեցաւ [տե՛ս Ղուկ. 15.32]:

Այս Սուրբ Խորհուրդը արգիլողները ասոնք են.

Սիրտի վախկոտութիւն, որ ձիու նման իր ստուերէն կը վախնայ:

Ամօթ. բայց ամօթը մոլութիւններու սանձ է: Զարհուրիլը պատիժէն, որ խոստովանահայրը կը դնէ. սակայն, ինչքան ծանր ըլլայ ապաշխարութիւնը, դժոխքի տանջանքներուն ստուերն իսկ չէ:

Մեղքերու ախորժելիութիւնը, բայց ժամանակաւորապէս կը զուարճացնէ, եւ յաւիտենապէս կը տանջէ:

Երկար կեանքի յոյսը, բայց կացինը ծառի բունին է, որ է մահը՝ հոգիին ու մարմինին մէջ:

Յուսահատութիւն Աստուծոյ շնորհը ընդունելու. սակայն քեզի օրինակ թող ըլլայ Մարիամ Մագթաղենացին:

Երկիւղ դարձեալ մեղքի մէջ իյնալէ. բայց Քրիստոս կ'ըսէ, եկո՛ւր, դուն, որ մեռելներուն մէջ կը ննջես [հմմտ. Յովհ. 11.43—44], իսկ Յովհան Ոսկեբերանը կ'ըսէ. ինչքան գլորիս, դարձեա՛լ կանգնիր:

Մեղանչողին օրինակը. բայց, եթէ մեղանչողին հետևեցար, հետևէ՛ նաեւ ապաշխարողին:

Մեղանչելու սովորութիւնը, սակայն, եթէ սատանան կրնայ մեղքեր սորվեցնել, եւս առաւել Աստուած կրնայ բարեգործութիւններ սորվեցնել:

Վերջինը՝ յանդգնաբար եւ առանց զղջալու յուսալն է Աստուծոյ ողորմութեան. ասիկա Սուրբ Հոգիին հայհոյութիւնն է. բայց, եթէ Աստուծոյ արդարութենէն չենք վախնար, ապա Անոր ողորմութենէն պէտք է ամչնանք եւ մեղքերէն յետ դառնանք:

Այս եւս պէտք է գիտնալ, որ ապաշխարութիւնը երեք մաս է. զղջում, խոստովանութիւն եւ հատուցում՝ գործած մեղքերու՝ ապաշխարութեան միջոցաւ: Զղջումը սիրտին սաստիկ ցաւն է մեղքերու տհաճութեան համար եւ կսկծալը՝ զԱստուած դառնացնելուն համար, մտածել խոստովանութեան եւ [մեղքին] փոխարէն պատիժ կրելու մասին: Որովհետև, մեղքը կամ միտքով կը գործուի, կամ բերանով եւ կամ գործով:

Միտքին պատիժը սիրտին ցաւն ու զղջումն է: Բերանինը՝ խոստովանութիւնը: Գործինը՝ ապաշխարութիւնը: Սակայն թէ՛ բերանի եւ թէ՛ գործածի պարագային, սիրտը պէտք է զղջայ, քանի որ ինք եղած է պատճառը անոնց գործելուն:

Դարձեալ՝ սիրտով պէտք է մեղքերէն գարշինք. բերանով՝ մենք մեզմէ պէտք է գանգատինք. գործով՝ մեղքերուն պատիժը կրենք:

Դարձեալ՝ մարդ մեղանչելով զԱստուած կը զայրացնէ, եկեղեցին [հաւատացեալները] կը գայթակղեցնէ, ինքզինքին կը վնասէ: Պէտք է զղջումով զԱստուած հաշտեցնել, խոստովանութեամբ՝ եկեղեցին, եւ ապաշխարութեամբ՝ ինքն իր հետ:

Դարձեալ՝ Քրիստոս երեք մեռածներ յարուցեց. մէկը՝ տան մէջ՝ յօրինակ սիրտի մեղքերուն: Մէկը դռան մօտ՝ յօրինակ բերանի մեղքերուն: Իսկ Ղազարոսը՝ գերեզմանէն՝ յօրինակ գործով մեղքերուն:

Իսկ խոստովանութիւնը հոգիին ծածուկ հիւանդութիւնը յայտնելն է՝ թողութեան յոյսով: Որովհետև խոստովանութեան նիւթը մեղքն է. խոստովանութեան գործը՝ ծածկուած վէրքը յայտնելը, իսկ վախճանը թողութիւնն է:

Խոստովանութիւնն ալ երեք կերպ է. քանի որ խոստովանութիւն կայ, որ կ'ըսուի գոհութիւն եւ շնորհակալութիւն՝ ստացած բարութիւններու, որ Աստուծմէ են:

Խոստովանութիւն կայ, որ Աստուծոյ ճշմարտութեան վկայութիւն է, եւ ասիկա հաւատքի խոստովանութիւնն է:

Խոստովանութիւն ալ կայ, որով մեր պակասութիւնն ու հիւանդութիւնը կը յայտնուի քահանային՝ թողութեան յոյսով. եւ ասիկա մեղքերու խոստովանութիւնն է, որովհետև վէրքը, որ ծածուկ կը մնայ, անբժշկելի կ'ըլլայ: ➥ *էջ 4*

Հակականոնական պարտադրանքի դեպքում ինչ ուղենիշներ են տալիս եկեղեցականներին կանոնը և Աստվածաշունչը

Այր Եկեղեցին լուրջ փորձություններով է անցնում: Հստակ է, որ Վեհափառ Հայրապետի անվան հիշատակության զեղչումը ոչ թե պարզ տեխնիկական բացթողում է, այլ պառակտման, հերձվածողության և եկեղեցական իշխանությունից դուրս գալու հստակ նշան: Դա Պատարագը դարձնում է հակականոնական, զուրկ փրկչարար ազդեցությունից, քանի որ Աստծո շնորհը և առաքելական շնորհի շղթայական փոխանցելիությունը գործում են միայն նվիրապետական կարգից ներս, այն էլ՝ խոնարհության և հնազանդության պարագայում, որովհետև այդ շնորհի աղբյուրը հենց Հիսուս Քրիստոս է, Որի մարմինն էլ Եկեղեցին է: Երկու մարմին կամ երկու եկեղեցի չի կարող լինել: Հետևաբար՝ քննենք, թե կանոնը և Աստվածաշունչն ինչ ուղենիշներ են տալիս եկեղեցականներին.

1. Եթե եպիսկոպոսը թույլ է տվել նվիրապետական անհնազանդություն, վարդապետական շեղումներ և մոլորության մեջ է, նրա իշխանության տակ գտնվող ողջ հոգևոր դասն ունի պարտականություն՝ ավելի բարձր եպիսկոպոսապետին՝ Կաթողիկոսին հնազանդվելու:

2. Չի կարելի նվիրապետական կարգի դեմ ապստամբած եպիսկոպոսին հետևելը համարել ավելի բարձր հնազանդություն, քան Կաթողիկոսին կամ Պատրիարքին հնազանդվելը, որոնք իշխանությամբ առավել բարձր են, քան եպիսկոպոսները:

3. Եթե եպիսկոպոսի հակականոնական ընթացքը հանգեցնում է մեղքի՝ պառակտման կամ հերձվածի, Պողոս առաքյալը հրահանգում է չմասնակցել դրան. «Ձեռքերդ շտապով որևէ մեկի վրա մի՛ դիր և ուրիշների մեղքերին մասնակից մի՛ եղիր, քեզ մաքո՛ւր պահիր» (Ա Տիմ. 5:22): Սա նշանակում է, որ քահանան չպետք է ստորագրի, աջակցի կամ մասնակցի եպիսկոպոսի ապօրինի գործողություններին: Իսկ ծառայող սարկավագ/դպիրների համար նշանակում է չմասնակցել եպիսկոպոսի/քահանայի ապօրինի գործողություններին:

4. Սուրբ Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսի և թեմակալ առաջնորդի անունների հիշատակումը ոչ թե պատվի հարց է, այլ տվյալ պատարագչի՝ Եկեղեցու հետ միության վավերագիրը: Ըստ եկեղեցական կանոնների՝ այն քահանան, որը դադարում է հիշատակել Կաթողիկոսի կամ թեմակալ առաջնորդի անունը, փաստացի ինքն իրեն Եկեղեցուց դուրս է հայտարարում: Նման պատարագիչը ոչ թե անձերի, այլ Քրիստոսի մարմնի և Եկեղեցու դեմ ապստամբ է համարվում:

5. Եթե եպիսկոպոսի հրամանը հակասում է Աստծո պատվիրանին կամ Եկեղեցու սրբությանը, գործում է Պետրոսի և մյուս առաքյալների սկզբունքը. «Պետք է առավել Աստծուն հնազանդվել, քան մարդկանց» (Գործք 5:29): Սա քահանայի իրավական և բարոյական այն հիմքն է, որը թույլ է տալիս չկատարել եպիսկոպոսի հակականոնական կամ հակաաստվածային հրամանը, առաջնորդվել Սուրբ Գրքով, Եկեղեցու կանոնով, այլ ոչ թե կույր և անխոհեմ հնազանդությամբ:

6. Եթե հակականոնական ընթացքը վերաբերում է դավանանքի աղավաղմանը, ապա Պողոս առաքյալը շատ խիստ է. «Եթե նույնիսկ մենք կամ երկնքից մի հրեշտակ ավետարանի ձեզ ավելին, քան այն, որ մենք ավետարանեցինք ձեզ, նզովյա՛լ լինի» (Գաղ. 1:8): Սա նշանակում է, որ Եկեղեցու դավանանքի ուղղափառությունն ավելի բարձր է, քան եպիսկոպոսական աստիճանը:

7. Պողոս առաքյալը ընդդիմանում է Պետրոս առաքյալին, երբ նա մեղադրելի ընթացքի մեջ էր (Գաղ. 2:11,14): Սա ցույց է տալիս, որ եթե առաջնորդն ուղիղ չի ընթանում, քահանան իրավունք ունի և պարտավոր է պաշտպանել ավետարանական ճշմարտությունը և մայր Եկեղեցու կանոնական ընթացքը:

8. Եթե եպիսկոպոսի հակականոնական ընթացքը վերածվում է վարդապետական շեղման կամ դեպի հերձված տանող պառակտման, առաքյալը հորդորում է հեռանալ նրանից. «Աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, ու՛շ դրեք այնպիսիներին, որ հերձվածներ և գայթակղություններ են առաջ բերում այն վարդապետությունից դուրս, որը դուք սովորել եք. և խորշեցե՛ք նրանցից, որովհետև այնպիսիները մեր Տիրոջը՝ Քրիստոսին չեն ծառայում, այլ իրենց որովայնին. և քաղցրախոսությամբ ու կեղծ գովասանքներով հրապուրում են անմեղների սրտերը» (Հռոմ. 16:17–18):

9. Եթե եպիսկոպոսը կամ քահանան հրահանգում է զեղչել Կաթողիկոսի անունը Ս. Պատարագի ժամանակ, չաղոթել նրա համար, ապա դա ուղղակի հակասում է Տեր Հիսուս Քրիստոսի պատգամներին և առաքյալների հորդորներին՝ անդադար, ամեն ժամ աղոթք անել, աղոթել անգամ հալածողների համար (Մատթ. 5:45, Մարկ. 14:38, Ղուկ. 18:1, Հռոմ. 12:12, Ա Թեսաղ. 5:25, Բ Թեսաղ. 3:1, Ա Տիմ. 2:1, Ա Պետր. 4:7, Գ Հովհ. 1:2):

10. Եպիսկոպոսի՝ հերձվածի կամ պառակտման մեջ գտնվելը ծանրագույն մեղք է, որին Եկեղեցին պետք է արձագանքի իր գործիքակազմով: Եթե եպիսկոպոսը գործում է հերձվածային կամ բացահայտ հակականոնական ուղղությամբ, օրինակ՝ պարտադրում է չհիշատակել Կաթողիկոսին Պատարագի ընթացքում, իր կամքին հակառակ հանրային սատարումներ հայտնել իրեն, ապա քահանայի պարտքն է չենթարկվել նման հրահանգի:

11. Եթե եպիսկոպոսը քահանային պարտադրում է կտրել կապը բարձրագույն եկեղեցական իշխանության հետ, քահանան պարտավոր է չհնազանդվել հակականոնական հրահանգին, հավատարիմ մնալ իր տված ուխտին և շարունակել կատարել Կանոնագրքի պահանջները՝ հիշատակելով Կաթողիկոսին: Այլապես, քահանան փաստացի ինքն իրեն Եկեղեցուց դուրս է հայտարարում: Նման պատարագիչը ոչ թե անձերի, այլ Քրիստոսի մարմնի և Եկեղեցու դեմ է ապստամբ համարվում:

12. Եթե պատարագիչը կարգալույծ է կամ ապստամբության մեջ է Մայր Աթոռի դեմ, զեղչում է Եպիսկոպոսապետի՝ Կաթողիկոսի անունը, ապա դպիրները և սարկավագները կարող են չմասնակցել նրա կողմից իրականացվող ծեսերին՝ այդ թվում Պատարագին, որը նման պարագայում վերածվում է պատարագանման արարողության՝ Աստծո շնորհից և փրկչական ազդեցությունից զուրկ:

13. Սարկավագի կամ դպիրի կողմից Վեհափառ Հայրապետի անվան բարձրաձայն հնչեցնելը, երբ կարգի մեջ պատարագիչը գիտակցաբար այն զեղչել է, չի փրկում իրավիճակը: Պատարագը մեկ ամբողջություն է: Եթե պատարագիչը կտրված է Եկեղեցուց, ապա սպասավորները չեն կարող այդ գործողությունը սրբացնել:

14. Նման դեպքում դպիրները և սարկավագները կարող են իջնել խորանից և չդառնալ հակականոնականության մասնակից: Սա ամենահզոր վկայությունն է ճշմարտության: Նրանք պարտավոր չեն լինել գործիք մեկի ձեռքում, որը քանդում է Եկեղեցին:

15. Առավել խիստ է Առաքելական կանոնը կարգալույծի՝ իբրև եկեղեցու սպասավորի հետ աղոթակից լինելու դեպքում, ըստ որի՝ եթե եպիսկոպոսը կամ քահանան կամ սարկավագը աղոթակից լինի կարգալույծի հետ, նա պետք է կարգալույծ արվի: Եթե հոգևորականներին արգելված է աղոթակից լինել նրանց, ապա հավատավոր ժողովուրդը առավել ևս պետք է խուսափի նրանց «պատարագներից», որպեսզի չդառնա նրանց մեղքի մասնակիցը:

Եզրակացություն. Աստվածաշունչը, Եկեղեցու սուրբ հայրերը և Կանոնական իրավունքը միակ դեպքում թույլատրում են, ավելին՝ պարտավորեցնում են քահանաներին չհնազանդվել, երբ եպիսկոպոսը դավանաբանական կամ նվիրապետական պառակտման կամ հերձվածի մեջ է: Նա այդ անհնազանդությամբ պաշտպանում է Եկեղեցու միասնությունը, ուղղափառությունը, Սուրբ Պատարագի կանոնական ընթացքը, հեռու պահում հավատացյալ հոտին գայթակղությունից, հաղորդակից դարձնում փրկչարար Խորհրդին: Այլապես, հոգևոր տեսանկյունից՝ հակականոնական պատարագանման արարողության ողջ պատասխանատվությունն ընկնում է թե՛ պատարագիչ քահանայի և թե՛ իրեն օրհնություն տվող առաջնորդ եպիսկոպոսի վրա: Աստծո շնորհը և առաքելական շնորհի շղթայական փոխանցելիությունը գործում են միայն նվիրապետական կարգից ներս, այն էլ խոնարհության և հնազանդության պարագայում: Եկեղեցու իշխանության անտեսումը դուրս է դնում պատարագչին Քրիստոսի մարմնից և որպես հետևանք՝ կտրում շնորհից, առանց որի՝ Ս. Պատարագը վերածվում է պատարագանման արարողության: Հակականոնական ընթացքը մեծագույն գայթակղություն է հավատավոր հոտի համար, իսկ դա, ըստ Տիրոջ ավետարանական խոսքի, ծանրագույն մեղք է:

Եկեղեցականի հավատարմությունը ոչ թե հավատարմություն է առանձին մարդուն, այլ Քրիստոսի Եկեղեցուն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Եկեղեցու նվիրապետական կարգին: Հետևաբար՝ չպետք է մասնակցել այն «պատարագներին», որտեղ չի հիշատակվում Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը: Առավել ևս չպետք է մասնակցել կարգալույծների «պատարագներին»:

Սամվել դպիր ԳՐԻԳՈՐՅԱՆ

Յակոբ Պատրիարք Նալեան. Ապաշխարութեան Խորհուրդի մասին

↩ էջ 3

Այլև՝ Քրիստոս, որ երկնաւոր Բժշիկն էր ու դեղի եւ հնարքի կարօտ չէր, աշխարհէն ելլելէ ետք, Իր փոխանորդները՝ քահանաները, ձգեց [կարգեց] եկեղեցւոյ մէջ, որպէսզի իրենց տրուած իշխանութեամբ խոստովանողներուն մեղքերը ներեն: Ասիկա այն ատեն յստակեցուց, երբ բորոտներուն ըսաւ, թէ՝ գացէ՛ք եւ դուք ձեզ քահանաներուն ցոյց տուէք, թէ ինչ պատճառով այդ բորոտութեան հանդիպած էք: Տակաւին, Նոր Օրէնքին մէջ մեղքը հոգիի բորոտութիւն մըն է, որ պէտք է քահանաներուն յայտնենք, քանի որ քահանաները Աստուծոյ աչքն են, ինչպէս Աստուած ըսաւ՝ ձեր չարիքները Իմ աչքերուս առջև թօթափեցէ՛ք [հմմտ. Եզեկ. 18.30–31]:

Արդ, պէտք է բարեպաշտօրէն խոստովանիմ, [գործած մեղքի] պարագաներով հանդերձ պէտք է խոստովանինք, որովհետև պարագաները կը ծանրացնեն ու կը թեթևցնեն մեղքերը, քանի որ այլ է կարգ ուսեցողի մը [հոգևորականի] մեղանչումը եւ այլ՝ աշխարհականինը. այլ է սուրբ վայրի մը մէջ մեղանչումը, եւ այլ՝ հասարակ վայրի մը մէջ: Մեղքին մէջ յարատևելը տկարութեան պատճառո՛վ էր, թէ՛ ստիպողաբար. կամաւորաբար ու գիտակցաբա՛ր, թէ՛ ակամայ եւ անգիտութեամբ: Ժամանակը, թէ՝ Տէրունական օրով էր, կա՛մ սովորական օրուայ մը մէջ. կամ քիչ փորձութեամբ մեծ մեղքերու մէջ ինկար ու չհակառակեցար: Կամ ուխտի դէմ մեղանչել՝ ուխտելով ու չկատարելով: Կամ կուսութիւն եւ կրօնաւորութիւն խոստացար եւ յետ կեցար: Թէ ինչ տեսակի մեղքերով աղտոտեցար:

Որովհետև բաւական չէ, որ ըսես, թէ՝ եօթը մահացու մեղքերէն մէկը գործեցի, ու մեղքին անունը ծածկես: Թէ որ աստիճանի մէջ գտնուեցար. քահանա՞յ էիր, թէ՞ եպիսկոպոս եւ այլն: Կամ թէ՝ նշանաւոր եւ անուանի մա՞րդ էիր եւ ուրիշներուն շատ գայթակղութիւն պատճառեցի՞ր: Կամ թէ՝ քանի՞ անգամ ինկար: Եւ թէ տարիքդ փո՞քր էր, թէ՞ կատարեալ եւ ծեր, կամ՝ ա՞յր, թէ՞ էգ: Եւ թէ՝ մեղքերէն ո՞ր մեղքին մէջ ինկար: Եւ թէ՝ ի՞նչ եղանակով ու ի՞նչ ձևով մեղանչեցիր: Կամ թէ՝ նախանձի՞ պատճառով յափշտակեցիր, թէ՞ ագահութեան: Ահա ասոնց պարագաներ կ'ըսուին:

Եւ թէ ինչպէ՞ս պէտք է խոստովանիլ.

Նախ՝ մեղքերու մէջ պէտք չէ յարատևես, այլ շուտով խոստովանիս, որպէսզի սովորութիւն չդառնայ:

Երկրորդ՝ յաճախ եւ պարբերաբար, տարին նուազագոյնը երեք անգամ, եւ եթէ մարդ մը մէկ անգամ չխոստովանի, զո՛ւրկ է քրիստոնէութենէ:

Երրորդ՝ խոստովանելի են նաեւ պարագաները:

Չորրորդ՝ ընտրութեամբ եւ հեծեծանքով ու լաւ խոստովանահայր գտնելով:

Հինգերորդ՝ ամօթի պատճառով մեղքը չծածկել:

Վեցերորդ՝ բարի ամօթխածութեամբ խոստովանիլ եւ ո՛չ թէ լրբութեամբ:

Եօթներորդ՝ կարգ ու կանոնով պէտք է խոստովանիլ եւ ո՛չ թէ այստեղ ու այնտեղ ցատկռտելով, քանի որ ցատկռտելով շատ մեղքեր կը մոռցուին:

Ութերորդ՝ պէտք է խոնարհաբար խոստովանիլ.

Նախ՝ սիրտով պէտք է խոնարհիլ Աստուծոյ առջև, թէ՝ Աստուծոյ շնորհներուն արժանի չեմ.

բ. Մարմինով գլուխը խոնարհեցնելով եւ գետնին նայելով քահանային առջև՝ իբրև Աստուծոյ փոխանորդ:

Իններորդ՝ պէտք է ամբողջութեամբ խոստովանիլ եւ ո՛չ թէ հատակտուր:

Տասներորդ՝ պէտք է սիրով խոստովանիլ եւ ո՛չ թէ ակամայ ու ստիպողաբար, որովհետև շունը եթէ ստիպողաբար որսի տարուի, իր տիրոջ օգուտ չի՛ տար:

Տասնմէկերորդ՝ պէտք է արցունքներով խոստովանիլ, քանի որ խոստովանութեան ընթացքին արցունքը լուացումի հոգևոր բաղնիք է:

Տասներկրորդ՝ մտածուած կերպով պէտք է խոստովանիլ. մէկ երկու օր առաջ պէտք է մտմտալ մեղքերուն մասին, որպէսզի խոստովանութեան ժամանակ չմոռցուին:

Տասներեքերորդ՝ հնազանդութեամբ պէտք է խոստովանիլ, որպէսզի քահանան ինչ ապաշխարութիւն որ սահմանէ, խոստովանողը յանձն առնէ կատարել:

Տասնչորրորդ՝ յատուկ կերպով պէտք է խոստովանիլ, որովհետև խոստովանողը ինքն իրմէ պէտք է գանգատի, եւ ո՛չ թէ ուրիշ մարդ մը պատճառ պէտք է բռնէ:

Ով որ զղջայ, խոստովանի եւ ապաշխարէ, իր անհուն մեղքերուն՝ շուտով դեղ կը գտնէ:

Վերջին Օծումի Խորհուրդի մասին

Վերջին Օծումի Խորհուրդը ներելի մեղքերուն համար սահմանուած է, ինչպէս ապաշխարութիւնը՝ մահացու մեղքերուն: Տակաւին, այս Խորհուրդը խափանուած չէ, այլ միայն ժամանակը փոխուած, որ Դրոշմէն ետք կը տրուի: Ոմանք Աւագ Հինգշաբթիի ոտնլուան եւս Վերջին Օծումին տեղ կը կատարեն:

Նաեւ՝ այս Խորհուրդը այդքան ալ հարկաւոր չէ, որ եթէ մէկը չկատարէ, փրկութենէն կը զրկուի, ինչպէս կ'ըսէ լատինացիներու վարդապետը՝ Թովմաս Ագուինացին: Որովհետև, վերջին հարկաւորութեան պարագային կատարեալ զղջումը այս Խորհուրդին պակասը կը լեցնէ:

Ապաշխարելը՝ մահացու մեղքերուն դեղն է,

Վերջին Օծումը՝ ներելի մեղքերուն սպեղանին:

Շարունակելի

«Քրիստոնէական Ուսանելի», 1806

Աշխարհաբարի վերածեց
Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆ

«Քարե օրենքի» դարաշրջանի ավարտն ու «Սրտի կրոնի» սկիզբը.

Երեմիա մարգարեի հեղափոխական տեսլականը

Աստվածաշնչյան պատմության ամենաճակատագրական պահերին հաճախ հնչում են ամենահզոր մարգարեությունները: Երեմիայի մարգարեության 31-րդ գլուխը հենց այդպիսիներից է: Երուսաղեմի անկման և բաբելոնյան աքսորի նախաշեմին, երբ թվում էր, թե Իսրայելի կրոնական և ազգային ինքնությունը ոչնչացման եզրին է, մարգարեն հռչակում է մի տեսլական, որը դուրս էր գալիս ժամանակի սահմաններից: Նա խոսում է ոչ թե պարզապես տաճարի վերականգնման կամ զոհասեղանների վերադարձի, այլ մարդ–Աստված հարաբերությունների՝ ուխտի հիմնարար «վերանորոգման» մասին:

Երեմիայի մարգարեության 31-րդ գլխի 31–34 հատվածը Հին Կտակարանի միակ տեղն է, որտեղ բառացի օգտագործվում է «Նոր ուխտ» եզրույթը. *«Ահավասիկ օրեր են գալու,– ասում է Տերը,– երբ նոր ուխտ եմ կապելու Իսրայելի տան հետ և Հուդայի տան հետ»:* Սա մի մարգարեություն է, որը սահմանագիծ է քաշում անցյալի և ապագայի միջև՝ ազդարարելով «Քարե օրենքի» դարաշրջանի ավարտն ու «Սրտի կրոնի» սկիզբը:

Հին ուխտի ճգնաժամը

Երեմիայի տեսլականի մեծությունն ընկալելու համար նախ պետք է հասկանալ Սինա լեռան վրա կնքված Հին ուխտի (Մովսիսական օրենքի) բնույթը: Այն հիմնված էր պայմանականության վրա. *«Եթե Իմ օրենքներով վարվեք և Իմ պատվիրանները պահեք ու կատարեք դրանք... Ես կշրջեմ ձեր մեջ և ձեզ Աստված կլինեմ, և դուք Ինձ ժողովուրդ կլինեք»*,– ասում է Տերը (*Ղևտ. 26:3, 12*): Այս արտահայտությունը կոչվում է *«Ուխտի բանաձև»:* Այն ցույց է տալիս երկկողմանի հարաբերությունը. կողմերից մեկը մարդն է, մյուսը՝ Աստված: Մարդուց պահանջվում է հնազանդություն և հավատարմություն Աստծո բարոյական և հոգևոր օրենքներին: Աստված խոստանում է ոչ միայն պաշտպանություն, այլև ամենակարևորը՝ ներկայություն: Նա խոստանում է լինել նրանց Հայրը, Պաշտպանը և Առաջնորդը:

Սակայն պատմությունը ցույց է տալիս, որ մարդն իր մեղավոր բնույթի պատճառով ի զորու չէ կատարելապես պահելու Աստծո սահմանած բարձր չափանիշները, իրեն մաքրելու և փոխելու համար չունի ուժ և միջոց:

Օրենքը սուրբ էր, բայց այն *արտաքին* էր: Քանի դեռ օրենքը գրված է «դրսում»՝ քարի վրա, այն պարզապես պարտադրանք է: Մարդը փորձում էր այդ պարտադրանքը կատարել սեփական ուժերով, բայց նրա մեղավոր բնույթը՝ ներսը, ընդդիմանում էր: Պողոս առաքյալը սա անվանում է «մարմնի տկարություն» (Հռոմ. 8:3): Օրենքն ասում էր՝ Վազիր, բայց մարդու ոտքերը «կոտրված» էին մեղքի պատճառով: Որքան էլ խիստ լիներ հրամանը, կոտրված ոտքով մարդը չէր կարող վազել:

Վախը կարող է ստիպել մարդուն զսպել իր արարքները (օրինակ՝ չգողանալ, որ չբռնվի), բայց չի կարող ստիպել մարդուն՝ չցանկանալ գողանալ: Օրենքը կարող էր կառավարել ձեռքերը, բայց ոչ՝ սիրտը: Մարդը ներսում մնում էր նույնը, թեև դրսից փորձում էր բարեպաշտ երևալ:

Քանի որ մարդիկ անընդհատ խախտում էին օրենքը, իսկ արդարությունը պահանջում էր պատիժ (մեղքի վարձը մահն է), նրանք ստիպված էին անընդհատ զոհեր մատուցել. *եթե մարդիկ զոհ մատուցեն, «նրանց մեղքերը կներվեն» (Ղևտ. 4:20, 26, 31):* Զոհաբերությունը ծառայում էր որպես «փոխարինող»: Մեղավոր մարդու փոխարեն մահանում էր անմեղ կենդանին (օրինակ՝ գառը կամ ցուլը): Սա *քավություն* էր (ծածկոց), որը թույլ էր տալիս Աստծուն ներել մարդուն և շարունակել հարաբերությունը նրա հետ: Սակայն, քանի որ մարդիկ շարունակում էին մեղանչել, զոհաբերությունները պետք է կրկնվեին *ամեն տարի և ամեն օր:*



Միքելանջելո. Երեմիա, 1511 թ.

Քահանայապետը ամեն տարի մտնում էր տաճար, զոհ էր մատուցում, բայց հաջորդ տարի մարդիկ նորից նույն մեղքերի մեջ էին: Դա նման էր վարկի տոկոսները փակելուն, երբ մայր գումարը երբեք չի պակասում, կամ մարդը նայում է հայելու մեջ և տեսնում է իր դեմքի ապականությունը, բայց հայելին չի կարողանում այն լվանալ: Հայելին Հին ուխտն է: Այն ցույց էր տալիս մարդուն, որ մեղավոր է, բայց ի զորու չէ մեղքերին կատարելապես թողություն տալու: Օրենքը մատնացույց էր անում միայն խնդիրը, բայց չէր լուծում այն:

Ի վերջո առաջանում էր մի ողբերգական շրջապտույտ՝ օրենքի իմացություն, խախտում, մեղքի զգացում և պատիժ, *«քանի, որ նոխազների և ցուլերի արյունը չէր կարող վերացնել մեղքերը» (Եբր. 10:4)*: Անհրաժեշտ էր արմատական փոփոխություն, որը կլուծեր ոչ թե մեղքի հետևանքը, այլ դրա պատճառը:

Նորը պետք էր, որովհետև «հին ճանապարհը» (օրենքը, քարը, վախը) սպառել էր իրեն: Այն ապացուցեց մի կարևոր բան. *մարդը չի կարող ինքնուրույն հասնել Աստծուն՝ պահելով կանոնները:*

Նոր ուխտը եկավ՝ լուծելու հենց այս ճգնաժամը.

Հայելու փոխարեն տվեց մաքրող Արյուն (Քրիստոսի զոհը):

Քարե տախտակի փոխարեն տվեց Սուրբ Հոգի, որը օրենքը գրում է սրտի մեջ: Հոգևոր իմաստով՝ նպատակն այն է, որ «քարե սիրտը» փոխվի «մարմնեղեն սրտի», որպեսզի օրենքը գրվի ոչ թե քարին, այլ մարդու ներսում՝ սիրո միջոցով:

Պահանջի փոխարեն տվեց զորություն (շնորհ), որ մարդը *կարողանա* կատարել Աստծո կամքը:

Հին ուխտը չի հակադրվում Նորին, կամ՝ հակառակը. նրանք *լրացնում և ամբողջացնում* են միմյանց. *«Մի՛ կարծեք, թե Օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա. չեկա ջնջելու, այլ՝ լրացնելու»* (Մատթ. 5:17): Հին ուխտն ասում էր՝ «Դու պարտավոր ես», իսկ Նոր ուխտն ասում է՝ «Ես քեզ կօգնեմ»:

Երեմիայի նկարագրած «Նոր ուխտը» բերում է հեղափոխական երեք փոփոխություն, որոնք վերափոխում են հավատքի էությունը:

Ա. Քարե տախտակի փոխարեն տվեց Սուրբ Հոգի, որը օրենքը գրում է սրտի մեջ:

➥ էջ 6

Երանի՛ նրանց, որ հալածվում են արդարության համար

Արդարության և հավատքի համար հալածանքը քրիստոնեության անբաժանելի մասն է: Քրիստոնյաների դեմ սոսկալի հալածանքները չեն մնացել Վաղ Եկեղեցու պատմության էջերում, մինչև այժմ էլ ցանկացած ճշմարիտ քրիստոնյա ենթարկվում է հալածանքի ու նեղության, քանի որ իր հայացքը մշտապես ուղղում է Արդարության Արեգակին: Լեռան քարոզում Հիսուս Քրիստոս երանության է արժանացնում նրանց, ովքեր հալածվում են արդարության համար և ավելացնում, որ այդպիսիներինն է Երկնքի Արքայությունը: Արդարության համար հալածվողները նրանք են, ովքեր ապրում են Աստծու արդարությամբ՝ հավատքով: Հին Ուխտում արդարությունը դրսևորվում էր Աստծու խոսքին ու պատվիրաններին հավատարմությամբ: Նոր Ուխտում արդարությամբ ընթացողը նա է, ով Քրիստոսի անունով մկրտված է և հավատքով մշտապես քայլում է Նրա հետ՝ իր առջև ունենալով Խաչյալ Փրկչին: Առաջին յոթ երանությունները մատնանշում են մարդու առաքինությունները՝ հոգով աղքատություն, սգավորություն, հեզություն, արդարության քաղց ու ծարավ, ողորմածություն, սրտով մաքրություն, խաղաղարարություն: Յուրաքանչյուր քրիստոնյա պետք է ապրի՝ համաձայն այս առաքինությունների, որով և կարող ենք մատնանշել նրա արդարությունը:

Հարց կարող է առաջանալ, թե ինչու են հալածվում առաքինություններով և բարի գործերով զարդարված մարդիկ: Այս հարցի լավագույն պատասխանը գտնում ենք Ավետարանում: Արդարության համար հալածանքի լավագույն օրինակը Քրիստոսի խաչելությունն է: Նա էր մեծագույն Արդարը: Խաչյալ Քրիստոսն է ճշմարիտ հալածյալը, Որին խաչեցին Գողգոթայում, քանի որ «….Լույսը եկավ աշխարհ, սակայն մարդիկ խավարն ավելի սիրեցին, քան լույսը, որովհետև իրենց գործերը չար էին. որովհետև ով չարիք է գործում, ատում է լույսը և չի գալիս դեպի լույսը, որպեսզի նրա գործերը իր երեսովը չտան» (Հովհ. Գ 19–20): Քրիստոսի՝ Արդարության Լույսի մասին Խրիմյան Հայրիկը գրում է. «Արդարությունը ոչ այլ ոք էր, եթե ոչ Նա, Ով իջավ երկնքից: Այդ Արդարությունը Լույս էր. խավարը տեսավ Նրան և սկսեց հալածել: Հերովդեսն այդ Արդարությունը հալածեց՝ մինչև Եգիպտոս տարագրելով, դպիրներն ու փարիսեցիները Նրան հալածեցին մինչև Գողգոթայի բարձունքը: Խաչի վրա մեռնող Աստծու արդարության համար հալածվեցին Ավետարանի ճշմարտության բոլոր քարոզիչները, սակայն հալածանքն անկարող եղավ կարճելու այդ հալածյալների ազատախոս լեզուները, որքան էլ որ հալածիչները փափագում էին մահվամբ երկրի երեսից վերացնել արդարության կենդանի վկաներին: Եկեղեցու անթիվ-անհամար զավակները Տիրոջ նմանողությամբ և անմռունչ գառան պես աշխարհի անզգամների ձեռքով սպանդի տարվեցին: Այո՛, Եկեղեցու կյանքը հալածանք է ենթադրում, Եկեղեցու զավակների երջանկությունը՝ չարչարանք» (Խրիմյան Հայրիկ, Երկնքի Արքայության մարգարիտը, Երևան, 2023, էջ 23):

Հիսուսին հետևելը հավասարազոր է արդար կյանքով ապրելուն: Սակայն Պողոս առաքյալը գրում է. «Եվ բոլոր նրանք, որ ուզում են աստվածպաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսով, հալածանքների մեջ պիտի լինեն» (Բ Տիմ. Գ 12): Ովքեր ապրում են աստվածպաշտությամբ և հալածվում են Քրիստոսին հետևելու համար, նրանք կարող են համարվել երանության արժանի: Հովհաննեսի Ավետարանում Տերն Իր առաքյալներին հալածանքների ու դժվարությունների մասին նախապես հայտնում է. «Եթե աշխարհը ձեզ ատում է, իմացեք, որ նախ ինձ է ատել: Եթե այս աշխարհից լինեիք, աշխարհն արդեն, որպես իրենը, ձեզ սիրած կլիներ. բայց որովհետև այս աշխարհից չեք, այլ ես ձեզ ընտրեցի աշխարհից, դրա համար աշխարհը ձեզ ատում է» (Հովհ. ԺԵ 18–19): Աստծու որդիները հալածանքների են ենթարկվում, քանի որ իրենց հույսն Աստված է, և ընթանում են՝ համաձայն աստվածախոս Սուրբ Ավետարանի: Եվ վերջապես՝ միայն արդարները կարող են արդարության համար հալածվել, և միայն Քրիստոսի ճշմարիտ աշակերտները կարող են Նրա համար նախատվել:

Սուրբ Ներսես Շնորհալին այս երանին մեկնում է հետևյալ կերպ. «….Այս խոսքը նախ վերաբերում է հավատքի վկաներին, որոնք հալածվեցին չարերից, և ապա՝ բոլոր բարեպաշտներին, որոնք հալածվում են ամբարիշտների կողմից…. և հիրավի՛ երանելի են այսպես հալածվողները, որովհետև չարից հալածվելով՝ հասան բարուն, ինչպես որ Հովսեփի հանդեպ նրա եղբայրների դավաճանությունը նրա թագավորելու պատճառ դարձավ: Այդպես էլ վկաները, չնայած կրած առժամանակյա ցավերին, Արքայության հույսով դյուրավ էին մարտնչում: Այդ պատճառով էլ ուրախանում էր մեծ Ստեփանոսը՝ ամեն կողմից քարկոծվելով, առաքյալները ուրախությամբ էին վերադառնում ատյանից և բազմօրիակ տանջանքները խնդությամբ էին ընդունում» (տե՛ս Սուրբ Ներսես Շնորհալի, Մեկնություն Մատթեոսի Ավետարանի, Ս. Էջմիածին, 2008, էջ 252–253):

Հալածանքները նաև ունենում են իրենց բարեբեր ազդեցությունը. հալածանքը փորձաքար է: Ձգտել առաքինության և հասնել դրան դեռ բավական չէ, պետք է նաև պահել այն, բայց դրա համար պետք է համոզված լինել, որ իրապես անկորուսանելի առաքինություն է, որի համար արժե հալածանքների ենթարկվել և նեղություններ կրել: Եվ երբ հալածվում ենք, ավելի ու ավելի ենք համոզվում, որ այդ առաքինությունը մեր հարստությունն է: Հալածողը հենց դրա համար է իր ետևից ուղղում մեզ վրա, որպեսզի հեռացնի, դուրս մղի մեր հոգուց: Դիմանալով հալածանքներին՝ առաքինությունները մաքրվում և զտվում են, ինչպես մետաղը՝ կրակի մեջ: Ինչպես Շնորհալի Հայրապետն է գրում. «Արքայության պտղի ծաղիկը նեղությունն է. եթե կամենում ենք պտուղը քաղել, նախ ծաղիկը հավաքենք. այստեղ հալածվենք, որպեսզի հասնենք վերին կոչմանը» (տե՛ս Սուրբ Ներսես Շնորհալի, էջ 253):

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը գրում է, որ արդարության համար հալածվողները նրանք են, ովքեր ոչ միայն իրենք են բարիք գործում և ճշմարտության հետևում, այլ նաև հակառակության թիրախ են դառնում (Մաղաքիա արք. Օրմանյան, Համապատում, Ս. Էջմիածին, 1997, էջ 159):

Երանի կլինեն նաև նրանք, ովքեր զրպարտվում են արդար գործերի համար և ուրախությամբ ու գոհությամբ, առանց տրտունջի՝ համբերում են իրենց բաժին հասած նեղությանն ու հալածանքին: Սուրբ առաքյալները Քրիստոսի Ավետարանը քարոզելու, մարդկանց՝ խավարից դեպի լույսն առաջնորդելու ճանապարհին ենթարկվեցին անասելի հալածանքների, մինչև իսկ նահատակության անթառամ պսակին արժանացան: Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալները, Հայաստան գալով, քրիստոնեական հավատի առաջին սերմերը գցեցին հայոց հողին, և նրանց արյունը հեղվեց նույն այդ հողին: Շուրջ երեք դար անց Աստծու Միածին Որդին իջավ Արարատյան դաշտ և ոսկե մուրճով հարվածելով՝ հաստատեց Իր Սուրբ Եկեղեցին: Հայոց աշխարհում քրիստոնեության դեմ հալածանքները շարունակվեցին, և միայն սուրբ նահատակների քաջությամբ ու արյամբ հնարավոր դարձան հարատևումն ու պայծառությունը մեր Սուրբ Եկեղեցու:

Շատերն էլ հալածանքների են ենթարկվում և կարծում են՝ արդարության համար է իրենց հալածանքը: Սակայն նրանք հալածվում են իրենց ամբարտավանության համար, քան թե հեզության, իրենց դաժանության և խստության, քան ողորմածության համար, իրենց անսրբության, քան սրտի մաքրության համար, իրենց կռվարար և խռովահույզ վարքի, քան խաղաղակյաց և խաղաղարար լինելու համար: Այսպիսինները մաս և բաժին չեն կարող ունենալ Երկնքի Արքայության:

Լինել արդարության կողքին նշանակում է լինել Քրիստոսի Սուրբ Եկեղեցու անդամ և պատրաստ լինել մշտապես ամեն տեսակ հալածանքների, որոնց վարձատրությունն է Երկնքի Արքայությունը:

Արամայիս սրկ. ԱՋԻՋՅԱՆ
Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տյառնընդառաջի կրակը՝ իբրև Հովհաննու Ավետարանի լույս

Սկիզբը՝ թիվ 3

Լույսը՝ որպես սկիզբ, ընթացք և վերջ

Տյառնընդառաջի աստվածաբանական ամբողջ հյուսվածքը հնարավոր է սեղմել մեկ առանցքի՝ Լույսի շուրջ: Սակայն այդ Լույսը չի ընկալվում որպես ստատիկ՝ անշարժ գաղափար կամ խորհրդանշական պատկեր, այլ որպես կենդանի իրականություն, որն ունի սկիզբ, ընթացք և վերջ՝ Քրիստոսով: Տոնը հենց այս ամբողջական շարժումն է բացահայտում՝ Աստծո ներգործությունը պատմության, Եկեղեցու և մարդու կյանքի վրա:

ԼՈՒՅՍԸ՝ ՈՐՊԵՍ ՍԿԻԶԲ — Սկիզբը Տյառնընդառաջի մեջ կապված է ոչ միայն Քրիստոսի ծննդի փաստի, այլև Նրա Հայտնության հետ: Լույսը չի մնում թաքնված, այլ դուրս է գալիս մարդուն ընդառաջ: Հովհաննու Ավետարանի նախաբանն այս սկիզբն է հռչակում. «Սկզբում էր Բանը, և Բանն Աստծո մոտ էր, և Բանն Աստված էր» (Հովհ. Ա 1): Տյառնընդառաջը ցույց է տալիս, որ այդ Սկիզբը չի մնում վերացական, այլ մտնում է Տաճար, մարդկային պատմություն, մարդու ձեռքերի մեջ: Այս իմաստով՝ Տյառնընդառաջը հակադրվում է ցանկացած կրոնական մտածողության, որը Աստծուն հեռու և անմատչելի է պահում: Այստեղ Լույսն սկսվում է ոչ թե մարդու որոնումից, այլ Աստծո ինքնահայտնությունից:

ԼՈՒՅՍԸ՝ ՈՐՊԵՍ ԸՆԹԱՑՔ — Տյառնընդառաջի կենտրոնում է շարժումը: Լույսը ոչ միայն հայտնվում է, այլև առաջնորդում է: Կրակը, ջահը, քայլքը և այս ամենը միասին միևնույն ճշմարտության տարբեր արտահայտություններն են. մարդը չի մնում իր տեղում, երբ տեսնում է Լույսը: Հովհաննու Ավետարանում Քրիստոսի խոսքը՝ «....Ով իմ հետևից գա, նա խավարի մեջ չի քայլի, այլ կյանքի լույսը կընդունի» (Հովհ. Ը 12), ենթադրում է ընթացք, ճանապարհ, շարունակություն: Այդ ընթացքը միաժամանակ անհատական և եկեղեցական է: Անհատական է, որովհետև յուրաքանչյուր մարդ իր սրտում է վառում ջահը: Եկեղեցական է, որովհետև այդ ընթացքը երբեք միայնակ չէ. այն տեղի է ունենում համայնքի մեջ, ծիսակատարության մեջ, աղոթքում: Տյառնընդառաջը ցույց է տալիս, որ քրիստոնեական կյանքը կանգ չէ, այլ ճանապարհ դեպի հանդիպում, որը մշտապես նորոգվում է:

ԼՈՒՅՍԸ՝ ՈՐՊԵՍ ՎԵՐՋ ԵՎ ԼԻՈՒԹՅՈՒՆ — Տյառնընդառաջի Լույսը վերջնականապես բացվում է վախճանաբանական-էսխատոլոգիական հորիզոնում: Այն Լույսը, որ Մանուկ էր Տաճարում, նույն Լույսն է, որ պիտի լուսավորի Նոր Երուսաղեմը, պիտի լուսավորի փրկություն հագած դրախտը. «Այնտեղ գիշեր չի լինելու. ճրագի և արեգակի լույսի կարիք չի լինելու, որովհետև Տերը՝ Աստված է լուսավորելու նրանց, և պիտի թագավորեն հավիտյանս հավիտենից» (Հայտն. ԻԲ 5): Տյառնընդառաջը կանխատեսումն է խաղաղ հանդիպումի և ոչ դատապարտումի: Սա ոչ թե մարում է ընթացքը, այլ լրացնում է այն: Սիմեոնի խոսքը՝ «Որովհետև իմ աչքերը տեսան քո փրկությունը» (Ղուկ. Բ 30), դառնում է Եկեղեցու մշտական աղոթք՝ տեսնել Լույսը և խաղաղությամբ ավարտել ճանապարհը:

Այսպիսով՝ Տյառնընդառաջը քրիստոնեական կյանքի ամբողջական բանաձևն է: Այն միավորում է.

- ՍԿԻԶԲԸ՝ որպես Աստծո ինքնահայտնություն,
- ԸՆԹԱՑՔԸ՝ որպես մարդու ազատ և գիտակցված շարժում դեպի Լույսը,
- ՎԵՐՋԸ՝ որպես լիություն, խաղաղություն և հավիտենական հանդիպում:

Տոնի կրակը վիճարկելի խորհրդանիշ չէ և դառնում է քարոզ՝ ուղղված մարդու սրտին: Այն ասում է, որ խավարի մեջ ապրող մարդը կոչված է քայլելու ոչ թե կուրորեն, այլ Լույսի հետևից: Եվ այդ Լույսը ոչ մի դեպքում կրակը չէ, այլ Նա, Ում մասին վկայում է կրակը՝ Քրիստոսը՝ աշխարհի ճշմարիտ Լույսը:

Տյառնընդառաջը՝ որպես ամենօրյա կոչում

Տյառնընդառաջը չի սահմանափակվում օրացույցով: Ամեն օր քրիստոնյան կանգնած է նույն ընտրության առաջ՝ վառե՞լ իր սրտի ջահը, թե՞ մնալ խավարում: Համատես Ավետարաններում Քրիստոս կոչ է անում. «Արդ արթուն կացեք, որովհետև չգիտեք ո՛չ օրը, ո՛չ էլ ժամը» (Մատթ. ԻԵ 13), որն էլ Տյառնընդառաջի վառվող ջահի խորհրդի մշտական արդիականացումն է: Տոնը դառնում է կյանքի եղանակ՝ ընդառաջ գնալ Տիրոջը ոչ միայն տաճարում, այլև ամբողջ գոյությամբ: Տյառնընդառաջի կրակը տեսնելով Հովհաննու Ավետարանի Լույսի մեջ՝ դադարում է լինել վիճաբանության առարկա և դառնում քարոզ: Այն վկայում է, որ Քրիստոս է կյանքի Լույսը, և մարդը կոչված է ոչ թե կանգ առնելու նշանների վրա, այլ անցնելու դրանց միջով դեպի իրականություն: Եվ ի վերջո Քրիստոս ասում է. «Քանի դեռ լույսն ունեք, հավատացե՛ք լույսին, որպեսզի լույսի որդիներ լինեք....» (Հովհ. ԺԲ 36): Սահմանելով Տյառնընդառաջը՝ կարող ենք ասել, որ այն քրիստոնեական հաղթանակի, հիշողության և ապրման տոն է՝ մթության մեջ վառված ջահերով դեպի հավիտենական Լույսը գնալու ճանապարհ:

Տյառնընդառաջը՝ որպես ծիսական հիշողություն և ապրում

Տոնը միայն անցյալ իրադարձության հիշատակում չէ, այլև ներկայում ապրող իրականություն: Եկեղեցին չի հիշում Տիրոջ Ընդառաջումը իբրև պատմական դրվագ, այլ վերապրում է այն՝ յուրաքանչյուր հավատացյալին դարձնելով Սիմեոն Ծերունու կերպարի ժառանգ: Սիմեոնն իր ձեռքերի մեջ վերցրեց Լույսը, իսկ այսօր հավատացյալը կոչված է՝ նույն Լույսն ընդունելու իր սրտում. «Սակայն նրանց, ովքեր ընդունեցին Նրան և հավատացին Նրա անվանը, իշխանություն տվեց Աստծո որդիները լինելու» (Հովհ. Ա 12):

Այս իմաստով՝ Տյառնընդառաջի բուն տոնի նախօրեի երեկոյան վառվող կրակը դառնում է ծիսական հիշողության տեսանելի նշան՝ ոչ թե արտաքին հանդիսություն, այլ ներսում կատարվող շարժման արտահայտություն դեպի Տերը:

Տյառնընդառաջի ժողովրդական ավանդույթները

Տոնի ընթացքում պահպանված ժողովրդական սովորույթները՝ կրակի շուրջ հավաքվելը, նորապսակների օրհնությունը, կրակի վրայով թռչելը, ունեն ոչ թե մոգական, այլ խորհրդանշական նշանակություն: Դրանք արտահայտում են մաքրագործում, նոր սկիզբ, ընտանիքի ամրացում և օրհնություն: Սրանք կարելի է ընկալել որպես ժողովրդական լեզվով արտահայտված՝ նույն Ավետարանական ճշմարտությունը, որ «Իսկ եթե մեկը Քրիստոսի մեջ է, նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ» (Բ Կորնթ. Ե 17):

Ազգային հիշողություն, ժողովրդական լեզու և եկեղեցական իմաստ

Հայ ժողովուրդը, ընդունելով քրիստոնեությունը, իր ազգային լեզվով և պատկերային մտածողությամբ արտահայտեց Ավետարանական ճշմարտությունները: Ժողովրդական ավանդույթները չեն ձևավորվել որպես դավանաբանական համակարգ, այլ իբրև խորհրդանշական լեզու: Կրակի շուրջ հավաքվելը համայնքի միասնության նշան է, ինչպես առաջին քրիստոնյաներն էին միասիրտ և միամիտ. «Ամեն օր տաճարում էին համախմբվում...» (Գործք Բ 46):

Նորապսակների օրհնությունը Տյառնընդառաջին ցույց է տալիս, որ ընտանիքը դիտվում է որպես Կենդանի Լույսի փոխանցման վայր: Համաձայն Քրիստոսի խոսքի՝ «Ոչ էլ ճրագը վառում ու գրվանի տակ են դնում, այլ դնում են աշտանակի վրա...» (Մատթ. Ե 15), ընտանիքը հենց այդ աշտարակն է, որտեղից լույսը պիտի երևա:

Կրակը և հեթանոսության նկատմամբ հաղթանակի խորհուրդը

Հաճախ առաջ քաշվող այն տեսակետը, թե Տյառնընդառաջը կապված է կրակապաշտության հետ, անտեսում է Հայ Եկեղեցու պատմական և աստվածաբանական փորձառությունը: Եթե որևէ կապ կարելի է տեսնել հեթանոսական անցյալի հետ, ապա միայն հաղթահարման և հաղթանակի տեսանկյունից: Ժողովրդական մեկնաբանությամբ՝ կրակի վրայով թռչելը ոչ թե կրակը պաշտելու, այլ այն անարգելու և հաղթահարելու խորհրդանիշ է՝ իբրև նախկին կուռքերի նկատմամբ հաղթանակ: ➥ *էջ 7*

«Քարե օրենքի» դարաշրջանի ավարտն ու «Սրտի կրոնի» սկիզբը

➥ *էջ 5*

«Իմ օրենքը նրանց մեջ պիտի դնեմ և նրանց սրտի վրա պիտի գրեմ» (Երեմ. 31:33): Հին ուխտում օրենքը մարդու դեմ կանգնած էր որպես դատավոր և պահանջատեր: Նոր ուխտում Աստված օրենքը տեղափոխում է մարդու ներսը: Դա նշանակում է բնույթի և կամքի վերափոխում: Ինչպես բնազդն է կենդանուն մղում գործողության, այնպես էլ Սուրբ Հոգով վերածնված մարդու համար աստվածահաճո կյանքը դառնում է *ներքին պահանջմունք:* Մարդը հնազանդվում է ոչ թե նրա համար, որ վախենում է պատժից (ինչպես ստրուկը), այլ որովհետև սիրում է Աստծուն և ցանկանում է գոհացնել Նրան (ինչպես որդին):

Պողոս առաքյալը հետագայում սա կանվանի «Հոգու օրենք», որը կյանք է տալիս՝ ի հակադրություն «տառի», որը սպանում է (Բ Կորնթ. 3:6):

Բ. Աստվածաճանաչողության փոփոխություն. միջնորդից՝ անմիջականություն:

«Եվ այլևս ամեն մեկն իր ընկերոջը չի սովորեցնելու, կամ ամեն մեկն իր եղբորը չի ասելու՝ «Ճանաչի՛ր Տիրոջը», քանզի ամենքը՝ նրանց փոքրերից մինչև մեծերը, ճանաչում են Ինձ....» (Երեմ. 31:34):

Հին աշխարհում Աստծուն մոտենալը բարդ և խիստ կանոնակարգված գործընթաց էր: Հասարակ մարդը կախված էր քահանայից, մարգարեից կամ զոհաբերությունից: Աստված «Սրբություն Սրբոցում» էր՝ վարագույրի հետևում: Երեմիան մարգարեանում է կրոնի «դեմոկրատացման» մասին՝ բառիս հոգևոր իմաստով: Աստված խոստանում է, որ յուրաքանչյուր հավատացյալ՝ *«փոքրից մինչև մեծը»*, կունենա անձնական ճանաչողություն: *«....Նրանց փոքրերից մինչև մեծերը ճանաչում են Ինձ»* արտահայտությունը վերացնում է հոգևոր «էլիտարիզմը»: Ճշմարտությունը հասանելի է դառնում բոլորի՝ անկախ սոցիալական դիրքից կամ կրթությունից:

Երեմիա 31:33-ում Աստված խոստանում է *«իր օրենքը դնել նրանց ներսում»*՝ մարդկանց մտքի մեջ, և գրել նրանց *սրտերի վրա:* Սա նշանակում է, որ բարոյականությունն ու հավատն այլևս չեն լինելու արտաքին հարկադրանք կամ սոսկ գրված կանոններ, այլ ներքին մղում: Հիսուսի խոսքերը՝ *«Իմ ոչխարներն Իմ ձայնը լսում են, և Ես ճանաչում եմ նրանց» (Հովհ. 10:27)*, հենց այս մարգարեության արձագանքն են:

Այս խոստումը հաճախ կապվում է քրիստոնեական ընկալման հետ, որտեղ Սուրբ Հոգու ներկայությունը համարվում է հենց այն «ներքին ուսուցիչը», որը մարդուն առաջնորդում է դեպի ճշմարտությունը՝ առանց արտաքին միջնորդների խիստ կարիքի:

Գողգոթայի խաչի վրա պատռվեց տաճարի վարագույրը՝ խորհրդանշելով, որ ճանապարհը դեպի Աստված այլևս բաց է բոլորի համար (անմիջական ճանաչողություն):

Հոգեգալստյան օրը Սուրբ Հոգին իջավ առաքյալների վրա՝ բնակվելով նրանց մեջ (օրենքը՝ սրտի մեջ): Սուրբ Հոգու էջքը առաքյալների վրա սկիզբ դրեց մի նոր իրականության: Մինչ այդ օրենքը դիտվում էր որպես արտաքին կանոնների հավաքածու, որին մարդը դժվարությամբ էր հնազանդվում: Սուրբ Հոգու բնակությամբ այն դարձավ *ներքին մղում* և սիրո արտահայտություն: Մարդն ինքը դարձավ «Աստծո տաճար»: Սուրբ Հոգին այլևս պարզապես չէր այցելում մարդկանց (ինչպես Հին ուխտում), այլ բնակություն հաստատեց նրանց մեջ:

Առաքյալները ոչ միայն իմացան Աստծո կամքը, այլև ստացան *զորություն* այդ կամքով ապրելու և այն աշխարհին քարոզելու համար:

Գ. Մեղքի լուծում. ծածկելուց՝ ջնջում:

«Նրանց անօրենությունները պիտի ներեմ և նրանց մեղքերն այլևս չպիտի հիշեմ» (Երեմ. 31:34):

Հին Կտակարանի զոհաբերական համակարգը կարող էր «ծածկել» մեղքը, բայց չէր կարող վերացնել մեղավոր խիղճը: Զոհերը ամեն տարի կրկնվում էին՝ անընդհատ հիշեցնելով մարդուն իր անկատարության մասին: Նոր ուխտի խոստումը բացարձակ ներումն է: *«Այլևս չհիշել»* արտահայտությունը նշանակում է, որ Աստված իրավական ուժից զրկում է մեր անցյալի մեղքերը: Դրանք այլևս երբեք չեն օգտագործվելու մեր դեմ:

Հին ուխտը կնքվել էր Մովսեսի միջոցով՝ կենդանիների արյան զոհաբերությամբ: Հին ուխտի զոհաբերությունները չէին կարող վերջնականապես ջնջել մեղքը, այլ միայն հիշեցնում էին դրա մասին մինչև «կատարյալ Զոհի» գալուստը: *Կատարյալ զոհը մեր Տեր Հիսուս Քրիստոսն է: Նոր ուխտը* կնքվեց Քրիստոսի արյամբ. Վերջին ընթրիքի ընթացքում Հիսուսն ասաց. *«Այս բաժակը նոր Ուխտ է, որ կնքվում է ձեզ համար թափված Իմ արյունով»* (Ղուկ. 22:20)՝ դրանով իսկ հաստատելով մարգարեության իրականացումը: Այդ պահին Երեմիայի տեսլականը մարմին առավ: Այս արտահայտությամբ Հիսուս հայտարարեց, որ հին օրենքների և զոհաբերությունների ժամանակաշրջանն ավարտվում է, և սկսվում է *շնորհի դարաշրջանը*: Մարդն այլևս Օրենքի տիրապետության տակ չէ, այլ՝ Շնորհի, որը մենք ստացանք Աստծո սիրո արդյունքում, *«քանի որ Աստված այնքա՛ն սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր միածին Որդուն տվեց»* (Հովհ. 3:16): Պողոսն ասում է. *«Արդարև, Աստված Ինքն էր, որ Քրիստոսով աշխարհը հաշտեցրեց Իր հետ և հաշվի չառավ նրանց մեղքերը ու մեզ տվեց հաշտության խոսք»* (Բ Կորնթ. 5:19):

Եբրայեցիներին ուղղված թղթում, մեջբերելով Երեմիայի մարգարեության 31:31 համարը, Պողոս առաքյալն անում է մի հանճարեղ եզրահանգում. *«Արդ, Նոր ուխտի մասին խոսելով՝ նա հին դարձրեց* առաջինը. *իսկ այն, ինչ հնանում է և ծերանում, մոտ է անհետանալուն»* (Եբր. 8:13): Հենց Երեմիայի այս հատվածն է այն բանի ապացույցը, որ քրիստոնեությունը ոչ թե նոր կրոն է, այլ հնագույն խոստման իրականացումը: Հինը «ծերացել է» և «մոտ է անհետանալուն», որովհետև եկել է Կատարյալը՝ Քրիստոսի վարդապետությունը:

Քրիստոնեության գալուստով նախկին կրոնական համակարգը՝ Հին ուխտը, կորցրեց իր ուժը: Այլևս կարիք չկա կենդանիներ զոհաբերելու մեղքերի համար, Աստծո հետ հարաբերվելու համար միջնորդներ պետք չեն, մեղքերն այլևս չեն ծածկվում, որովհետև Քրիստոս մեկընդմիշտ զոհաբերվեց, և Աստված հաշտվեց մարդու հետ: Մահից առաջ մեր Տերն ասաց՝ *Կատարվեց: Հիսուս կատարեց Իր առաքելությունը՝ Իր վրա վերցնելով մարդկության մեղքերն ու բացելով դեպի Աստված տանող ճանապարհը:*

Երեմիա մարգարեի տեսլականն այսօր էլ արդիական է յուրաքանչյուր մարդու համար: Շատ հաճախ մենք փորձում ենք մեր հոգևոր կյանքը կառուցել «Հին ուխտի» սկզբունքներով՝ արտաքին կանոններ, ձևական պարտականություններ և վախ: Սակայն Աստված հրավիրում է մեզ «Նոր ուխտի» իրականություն, Աստված ուզում է հանել մեր միջից «քարե սիրտը» և տալ մեզ «մարմնեղե՛ն կենդանի սիրտ», որն ունակ է սիրելու, ներելու և ապրելու Աստծո ներկայության մեջ, որտեղ Օրենքը սերն է, Տաճարը՝ մարդու սիրտը, իսկ Քահանայապետը՝ Ինքը Քրիստոս:

Շահեն ԽԱՉԱՏՐՅԱՆ, ե. գ. թ.

Խրիմյան Հայրիկի կերպարը գրականության մեջ.
Ղազարոս Աղայան և Խրիմյան Հայրիկ

Սկիզբը՝ թիվ 3

Յաֆայում Աղայանը մնում է երկու օր՝ Հայրիկից անբաժան: Այդ տարի Երուսաղեմում ձմեռը անսովոր ցուրտ էր, և Հայրիկը եկել էր Յաֆա, ուր եղանակը գրեթե գարնանային էր:

Երկու օրից հետո Աղայանը մտադիր էր վերադառնալ Պոլիս՝ իր ուխտը ավարտված համարելով, բայց Հայրիկը չի թողնում: Նա հորդորում է Աղայանին գնալ Երուսաղեմ, որովհետև այնտեղ շատ բան կա տեսնելու և ուսումնասիրելու, ու սկսում է պատմել, թե ինչ հետաքրքրական տեղեր կան, ինչ վճարներ են պահանջվում դրանց համար: Հայրիկն ասում է, որ Աղայանը չափսոսա վճարել, իսկ եթե պակաս լինի գումարը, ապա Խրիմյանն ինքը կվճարի և հոգ կտանի Աղայանի մասին: Ապա ավելացնում է, որ երեք օրից հետո ինքն էլ կգնա Երուսաղեմ և անձամբ կառաջնորդի Աղայանին տեսարժան վայրեր:

Ինչպես խոստանում է, Հայրիկը շուտով գնում է Երուսաղեմ՝ ուխտավորների մեծ բազմության ուղեկցությամբ. «Շատերը, Հայրիկի անունը լսելով, գալիս են և ոտքերն ու փեշերը համբուրում: Խեղճ մարդը հալ ու մաշ է լինում և հազիվ է կարողանում պաշտպանվել իր պաշտողներից: Այս տեսարաններին ներկա լինելով՝ ես ակամա այն համոզմանը եկա, որ եթե Հայրիկը, աստված մի արասցե, օտարության մեջ մեռնի, ուխտասեր ժողովուրդը նրա գերեզմանի վրա հող չի թողնի: Ամեն մեկը, մի բուռ տանելով, շարունակ կքանդեն, ով գիտե, գուցե և հին ժամանակի պես մաս-մաս անեն նրա մարմինը և այդ մասունքները տարածեն ամեն տեղ....»:

Երուսաղեմում Աղայանը Հայրիկի մոտ մնում է շուրջ երկու շաբաթ: Հայրիկի հորդորով՝ նա շրջում է քաղաքում, իսկ մի քանի վայր էլ Հայրիկը Աղայանին ուղեկցում է իր եղբորորդի Խորենի հետ, որը մի քանի օր առաջ էր եկել Երուսաղեմ: Երբ Հայրիկը մեծ քայլերով առաջ էր գնում, Աղայանն ու Խորենը ծիծաղելով վազում էին նրա հետևից, ինչպես երեխաներ. «Այս հայը, ինչպես լավ է նկատել պ. Արծրունին, թե մանուկ ու թե վիթխարի է: Քաջալանջ, լայնաթիկունք և հաստաբազուկ, իսկ հասակով մեր զորապետ Լազարյանին է հիշեցնում, միայն Հայրիկի կազմվածքը ավելի բարեձև է և շատ թանկագին օրինակ մի ճարտար արձանագործի համար: Մտավորապես Հայրիկը ոչ միայն զարգացած է, այլև անընդհատ զարգանում է: Ոչ միայն ուսումնասեր է, այլև չափից դուրս հարցասեր. ուզում է ամենայն բան իմանալ, ամեն մի նորագույն վարդապետություն, նորագույն ուսմունք իր ուշադրությունը գրավում է և լսում է շատ սիրով: Լսելիս՝ կարծես զարմանում է մի կողմից մարդկային հանճարի բեղմնավորության վրա, մյուս կողմից կարծես համեմատում է իր ազատ մտմտուքների հետ: Հավատում է գիտության ուժին և նրա ապագա փառավոր հաղթանակին: Իսկ երբ որ ինքն է պատմում իր տեսածների մասին Եվրոպայում, լսողը միայն սքանչանում է նրա դիտողության ուժի և արած սուր նկատողությունների վրա: Բարոյապես Հայրիկը հիշեցնում է Քրիստոսի ձկնորս առաքյալներին: Ատելով ատում է ամենայն պատեպատ, մանվածո, սեթևեթ և, ինչպես ինքն է ասում, ճղճիմ մեկնություններն ու բացատրությունները և որքան շատ է կարդացել այդպիսի բաներ, այնքան շատ է զզվել: Քրիստոնեական կրոնը, ասում է Հայրիկը, որ եկավ մեզ ազատելու դարավոր գերությունից, այդ դարձավ և նրա նշանաբանը: Այդ կրոնին բռնակալի դեր տվողները բռնակալներ են միայն....»:

Հրաժեշտի պահին Խրիմյանը սրտնեղում է, որ ինքը դեռևս իր սիրտը չէր բացել Աղայանին. «Ես հայրենիքիս կարոտովը կմարիմ և ծանր է ինձ մտածել, որ պիտի մեռնիմ օտար հողի վրա, ես կուզեմ Վարագ մեռնիլ: Ինձ համար շատ նեղ վանդակ է Երուսաղեմը, ես կփափագիմ դարձյալ մեկ անգամ սլանալ հայրենիքիս օդի մեջ»:

Աղայանը գրում է, որ Հայրիկը երբեք անձնական փառքի կամ բարձր դիրքի հասնելու համար միջոցներ չի գործադրել, բայց երբ ժողովրդի կողմից որևէ պաշտոնի դիմում-խնդրանք է ստացել, երբեք չի մերժել: Ոմանք գրում էին նրան՝ խորհուրդ տալով հրաժարվել, կամ պահանջում էին, որ հենց հիմա հայտարարի՝ ընդունելո՞ւ է արդյոք պաշտոնը, թե՞ ոչ՝ նշելով, որ ծեր է, տկար և այլն: Հայրիկը ասում էր, որ չի հասկանում նրանց նպատակն ու ուշադրություն չի դարձնում: Ավելին՝ նույնիսկ ասում էին, թե իր՝ Հայրիկի անունն օգտագործում են միայն ուրիշների շահերն ապահովելու համար: Հայրիկը դրան հակառակ չէր. մտածում էր, որ իր անունը թող հրապարակում լինի, եթե դրա միջոցով որևէ օգտակար բան կարող է անել հայրենիքի համար:

Աղայանը Խրիմյանին բացատրում է, որ այն մարդիկ, որոնք Հայոց Հայրիկի անունը պատրվակ են համարում կամ հանդես գալիս նրա անունից, Սեդրակյանի ոխերիմ թշնամիներն են: Միաժամանակ հայտնում է, որ Սեդրակյանը շատ սրտակից բարեկամներ ունի, որոնցից մեկն էլ ինքն է՝ Աղայանը, և լավ ծանոթ է նրա զգայուն ու նուրբ բնավորությանը, և որ Սեդրակյանն ինչ որ սուրբ ուխտ է արել Հայրիկի համար, թեև հուշագրության մեջ չի մանրամասնում, թե դա ինչ ուխտ է:

Ղ. Աղայանը Խրիմյանին անդրադարձել է նաև իր՝ «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրության մեջ: Հայ հուշագրության մեջ Աղայանի այս երկը շատ նշանակալից մի գործ է: Իր ընդգրկած ժամանակաշրջանի (1850-ական թվականներից մինչև 1890-ական թվականների սկիզբը) հայ կյանքի ու մշակույթի յուրահատուկ մի հանրագիտարան է, աղբյուրագիտական հիմք այդ ժամանակաշրջանն ուսումնասիրող հետազոտողների համար: «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրության մեջ Աղայանը Խրիմյանի մասին գրում է հետևյալը. «Այս գայթակղական հանգամանքներից կնվաճվեր իմ ուսման սերը, եթե այդ սիրո վրա ավելացած և աճած չլիներ իմ մեջ և հայրենիքի սերը: Դրա նյութն ունեի ես, բայց մի բարեպատեհ հանգամանք պետք էր, որ վառվեր և բորբոքվեր: Խրիմյան Հայրիկը մի երկնային շանթով վառեց իմ մեջ այդ նյութը»:

Աղայանը հիշում է, որ Հայրիկի քարոզն առաջին անգամ լսել է Մեյդանի Սուրբ Գևորգ եկեղեցում. ինքը կանգնած էր առջևի շարքում և դեռ չէր տեսել Հայրիկի դեմքը: Երբ Հայրիկը բարձրացավ բեմ և հայացքը ուղղեց ժողովրդին, նույնիսկ առանց խոսելու՝ նրա հայացքը թողեց մի անսովոր տպավորություն: Աղայանի երևակայության մեջ անմիջապես կենդանացել են Մեծն Ներսեսը, Սահակ Պարթևը և Սուրբ Մեսրոպը, նրա հոգին իր բոլոր զգացումներով վերացել, թռել էր Հայաստան. «Աստվածասիրություն, հայրենասիրություն և ուսումնասիրություն երրորդության պես միացյալ ուժով տիրեցին իմ ամբողջ բնությանը, այլևս ուրիշ զգացումների տեղի չտվին: Աշխարհային փառք, պատիվ, վայելչություն բոլորովին ոչնչացան ինձ համար»,— գրում է Աղայանը:

Բացի վերոհիշյալ ընդարձակ հուշագրություններից՝ Ղ. Աղայանը Խրիմյան Հայրիկի կերպարին անդրադարձել է նաև 1890 թ. հրատարակված «Մի երես մեր նորագույն պատմությունից (Իմ հիշատակարանից)» ակնարկում. «Կրոնական վեճերի այս թունդ ժամանակը Վարագա լեռներից իջավ չնաշխարհիկն Խրիմյան, իբրև մի հինգերորդ դարու Մեսրոպ՝ այցելեց Վրաստան՝ ոչ նոր գիր տալու նրան, այլ նոր ձայն հնչեցնելու հայերի ականջին և նոր հոգի փչելու նրանց սրտերի մեջ: ➥ *Էջ 8*

Տյառնընդառաջի կրակը՝ իբրև Հովհաննու Ավետարանի լույս

➥ *Էջ 4*

Այս նույն տրամաբանությամբ՝ Գրիգոր Լուսավորիչը քանդել տվեց ատրուշաններ և հենց դրանց տեղում եկեղեցիներ հիմնեց՝ ցույց տալու համար, որ Քրիստոսի Լույսը ոչ թե համատեղվում է հեթանոսության հետ, այլ փոխարինում և հաղթահարում է այն: Ամենախոսուն օրինակը Մայր Տաճարի Մայր Խորանն է, որը կառուցված է նախկին կրակարանի վրա՝ իբրև քրիստոնեության բացարձակ հաղթանակ հեթանոսության նկատմամբ:

Կրակի վրայով թռչելը պաշտամունք չէ, այլ հաղթահարում

Ժողովրդական պատկերացմամբ՝ կրակի վրայով թռչելը մաքրագործում կամ բարի բախտի ակնկալիք է, սակայն եկեղեցական-այլաբանական մոտեցմամբ՝ այն ունի այլ շեշտադրում: Թռչել կրակի վրայով նշանակում է վեր կանգնել այն տարրից, որը հեթանոսության մեջ աստվածացվել էր: Այստեղ մարդը կրակի առաջ չի խոնարհվում, այլ անցնում է նրա վրայով՝ ցույց տալով, որ ինքը չի ծառայում տարրին, այլ ծառայում է Արարչին: Քրիստոնեությունը երբեք չի համադրվել հեթանոսության կամ առավելաբար կրակապաշտության հետ, այլ փոխակերպել է տարածքը՝ հնին տալով նոր՝ փրկարար բովանդակություն:

Համեմատական դիտարկում այլ ժողովուրդների ավանդույթների հետ

Տարբեր ժողովուրդների պատմության մեջ առկա են լույսի կամ կրակի շուրջ ձևավորված տոներ, սակայն քրիստոնեական Տյառնընդառաջը չի կարելի նույնացնել դրանց հետ: Այստեղ ոչ թե բնության շրջապտույտն է նշվում, այլ պատմության մեջ Աստծո ներխուժումը: Քրիստոնեության լույսը տիեզերաբանական չէ միայն, այլ հստակ է և անձնավորված: Ինչպես Քրիստոս, Իր մասին վկայելով, ասաց. «Ես եմ աշխարհի լույսը, ով իմ հետևից գա, նա խավարի մեջ չի քայլի, այլ կյանքի լույսը կընդունի» (Հովհ. 8.12), այդ հիմքով է, որ մենք՝ հայ քրիստոնյաներս, վկայում ենք, որ վերոնշյալ խոսքն արմատապես տարբերում է Տյառնընդառաջը ցանկացած բնապաշտական տոնից:

Քառասուն թվի խորհրդաբանությունը Տյառնընդառաջի համատեքստում

Տյառնընդառաջը տեղի է ունենում Սուրբ Ծննդից քառասուն օր անց, իսկ քառասուն թիվը Սուրբ Գրքում փորձության, պատրաստության և անցման խորհուրդ ունի: Քառասուն օր Մովսեսը Սինա լեռան վրա էր. «Մովսեսը լեռան վրա մնաց քառասուն օր և քառասուն գիշեր» (Ելք ԻԴ18), քառասուն օր Եղիան քայլեց դեպի Քորեբ. «Եվ նա վեր կացավ, կերավ ու խմեց և այդ կերակրի զորությամբ քառասուն օր ու քառասուն գիշեր գնաց մինչև Աստծու սարը՝ Քորեբ» (Գ Թագ. ԺԹ 8), քառասուն օր Քրիստոսը ծոմ պահեց անապատում. «Նա քառասուն օր ու քառասուն գիշեր ծոմ պահելուց հետո քաղց զգաց» (Մատթ. Դ 2): Տյառնընդառաջն այս շարքում ներկայացնում է անցումը սպասումից դեպի ճանաչում. Քրիստոս այլևս ոչ միայն ծնված Մանուկ է, այլև ճանաչված Տեր: Ծիսական տեսանկյունից կարևոր է այն, որ Տյառնընդառաջը գտնվում է Սուրբ Ծննդյան շրջանի ավարտական հատվածում: Սա ցույց է տալիս, որ առհասարակ ծնունդը չի փակվում մանկան օրորոցով, այլ բացվում է որպես ճանապարհ դեպի զոհաբերություն, խաչ և հարություն: Ծեսը հավատացյալին դուրս է բերում զգացմունքային ուրախությունից և տանում փրկության պատմության խորքը:

Տոնի աղոթական լեզվում հաճախ հնչում են «ընդառաջ», «ընդունել», «տեսնել» հասկացությունները: Սա հիշեցնում է, որ քրիստոնեական հավատքը լսելու կրոն չէ միայն, այլ տեսնելու և ընդունելու: Քրիստոսի՝ «եկեք ու տեսեք» (Հովհ. Ա 39) հրավերը Տյառնընդառաջի ներքին կոչումն է:

Տյառնընդառաջը քրիստոնեական տարբեր շերտերում

Տոնը խորհրդանշում է նաև հավատքի հասունացման փուլը: Այն մանկությունից գիտակցված հավատքի անցման պատկերն է: Մանուկ Քրիստոսը ներկայացվում է Տիրոջը, և այս ներկայացումը հիշեցնում է յուրաքանչյուր հավատացյալի կոչումը՝ իր կյանքը ներկայացնել Աստծուն՝ որպես կենդանի ընծա. «Ձեր մարմինները մատուցեք կենդանի զոհ՝ սուրբ և աստվածահաճո. դա է ձեր հոգևոր պաշտամունքը» (Հռոմ. ԺԲ 1), գիտակցելով այդ ընծայաբերման մեծագույն վարձը, որը Հարությունն է: Սիմեոնի մարգարեությունը շատ դիպուկ այս մտածողության մեջ ներառում է նաև խաչի ստվերը. «Քո հոգու միջով էլ սուր պիտի անցնի, ինչպես որ շատերի սրտերի խորհուրդները պիտի հայտնի դառնան» (Ղուկ. Բ 35): Այս խոսքը ցույց է տալիս, որ Լույսն աշխարհ է գալիս ոչ թե խավարի բացակայության, այլ դրա դիմադրության ընթացքում: Ուստի՝ տոնն արդեն կրում է Խաչի և Հարության կանխազգացումը: Լույսը չի մարում խավարից, այլ անցնում է նրա միջով:

Տոնը կարելի է ընկալել նաև որպես ամբողջ քրիստոնեական կյանքի սեղմ քարտեզ՝ ծնունդ, սպասում, հանդիպում, վկայություն և առաքելություն: Այս ամբողջ ընթացքը լուսավորվում է մեկ Լույսով՝ Քրիստոսով. «Ես եմ Ալֆան ու Օմեգան, Սկիզբն ու Վերջը, Առաջինն ու Վերջինը» (Հայտն. ԻԲ 13):

Տյառնընդառաջը և քրիստոնեական վախճանաբանությունը

Տյառնընդառաջի տոնը ունի նաև հստակ վախճանաբանական ուղղվածություն: Եթե Տիրոջ առաջին Ընդառաջումը տեղի ունեցավ Տաճարում՝ Մանկան կերպարանքով, ապա Եկեղեցին մշտապես սպասում է երկրորդ Ընդառաջմանը՝ Քրիստոսի փառավոր Գալստյանը: Այս երկու իրադարձությունները միմյանցից անջատ չեն, այլ կազմում են մեկ շարունակական փրկարար գիծ:

Սիմեոնի կերպարն այստեղ դառնում է վախճանաբանական խորհրդանիշ. նա սպասող մարդն է, որ ճանաչում է Տիրոջը, երբ Նա գալիս է ոչ թե զորությամբ, այլ խոնարհությամբ: Սա նախապատրաստում է հավատացյալին՝ հասկանալու, որ երկրորդ Գալստյան սպասումը նույնպես պահանջում է հոգևոր բաց աչք. «Արդ արթո՛ւն կացեք, որովհետև չգիտեք, թե ձեր Տերը ո՛ր ժամին կգա» (Մատթ. ԻԴ 42): Տյառնընդառաջի լույսն այս իմաստով չի վերաբերում միայն անցյալին կամ ներկային, այլև ուղղված է ապագային: Պողոս առաքյալն ասում է. «Գիշերն անցել է, ու ցերեկը՝ մոտեցել, ուրեմն խավարի գործերը դեն գցենք և լույսի զենքերը հագնենք» (Հռոմ. ԺԳ 12), որն էլ Տյառնընդառաջի վախճանաբանական բանաձևն է: Տոնի կրակն այս դիտանկյունից հիշեցնում է նաև իմաստուն կույսերի լամպերը, որոնք վառ էին Փեսայի գալստյան ժամանակ, որտեղ կրկին կրակը ինքնանպատակ չէ, այլ սպասման պատրաստվածության նշան: Տյառնընդառաջը սովորեցնում է, որ Տիրոջ ընդառաջ չեն գնում նրանք, ովքեր պարզապես սպասում են, այլ նրանք, ովքեր պատրաստ են:

Վախճանաբանական հորիզոնում Տյառնընդառաջը նաև հույսի տոն է: Այն հռչակում է, որ պատմությունը ոչ թե փակվում է խավարով, այլ բացվում է Լույսով: Վերջնական հանդիպումը չի լինելու կորստի, այլ լիության պահ. «Քաղաքը ո՛չ արևի, ո՛չ էլ լուսնի կարիք ունի, որպեսզի իրեն լուսավորեն, որովհետև Աստծու փառքն է լուսավորում նրան, և Գառը՝ նրա ճրագը» (Հայտն. ԻԱ 23): Ուստի՝ Տյառնընդառաջը միաժամանակ հիշողություն է առաջին հանդիպման, ապրում՝ ներկա հանդիպման, և հույս՝ ապագա հանդիպման:

Հովհաննես սրկ. ԷՎԻՆՅԱՆ
Դիանա ՔՈՉԱՐՅԱՆ

Հանուն հավատքի պատերազմելու գաղափարը Սուրբ Գրքում

Սկիզբը՝ թիվ 3

Նոր Կտակարանը. պայքար՝ առանց սրի: Նոր Կտակարանում տեղի է ունենում արմատական շրջադարձ: Հիսուս Քրիստոս մերժում է հավատքի տարածումը բռնության միջոցով. «Իմ թագավորությունն այս աշխարհից չէ. եթե Իմ թագավորությունն այս աշխարհից լիներ. չէ՞ որ Իմ հետևորդներն արդեն կմարտնչեին, որպեսզի հրեաների ձեռքը չմատնվեմ. բայց, արդ, Իմ թագավորությունն այս աշխարհից չէ» (Հովհ. 18:36): Նա սուրը փոխարինում է խաչով, հաղթանակը՝ զոհաբերությամբ: Այնուամենայնիվ, Նոր Կտակարանում ոչ միայն շարունակում է օգտագործվել պատերազմին վերաբերող բառամթերքը, այլև այն վերաիմաստավորում է: Պողոս առաքյալը գրում է. «Մեր պատերազմը մարմնի ու արյան դեմ չէ, այլ իշխանությունների ու պետությունների, այս խավար աշխարհի տիրակալների և երկնքի տակ գտնվող չար ոգիների դեմ» (Եփես. 6:12): Այստեղ պատերազմը բացահայտորեն հոգևոր է, իսկ զենքերը՝ հավատքը, արդարությունը, ճշմարտությունը:

Քրիստոնեական պայքարն ուղղված չէ մարդու դեմ, այլ մեղքի, մահվան և չարիքի դեմ: Սա է քրիստոնեական պատերազմի հիմնական աստվածաբանական նորույթը: Հիսուսի խոսքը՝ «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, բարությո՛ւն արեք ձեզ ատողներին և աղոթե՛ք նրանց համար, ովքեր չարչարում ու հալածում են ձեզ» (Մատթ. 5:44), արմատապես վերափոխում է հակամարտության ընկալումը: Թշնամին այլևս ոչ թե ոչնչացման ենթակա սուբյեկտ է, այլ փրկության հասցեատեր: Այսպիսով՝ պայքարը դառնում է սիրո և ներման գործնական արտահայտություն՝ ուղղված ոչ թե դիմացինի պարտությանը, այլ նրա վերափոխմանը:

Աստվածաբանական տեսանկյունից Նոր Կտակարանում պատերազմական լեզվի պահպանումը ծառայում է վախճանաբանական լարվածության արտահայտմանը: Քրիստոնյան ապրում է «արդեն, բայց դեռ ոչ» իրականության մեջ, որտեղ Աստծո Թագավորությունը հաստատվել է Քրիստոսի միջոցով, սակայն իր լիակատար դրսևորումը դեռ առջևում է: Այդ պատճառով պայքարը շարունակվում է, բայց ոչ պատմական զենքերով, այլ հավատքի տոկունությամբ, համբերությամբ և հույսի դիմացկունությամբ: Հայտնության գրքում այս լարվածությունը հասնում է իր գագաթնակետին, որտեղ հաղթանակը պատկանում է ոչ թե զինված զորքին, այլ «մորթված Գառանը» (հմմտ. Հայտ. 5:6):

Փիլիսոփայական հարթությունում այս մոտեցումը հակադրվում է հին աշխարհի ուժի և գերակայության տրամաբանությանը: Եթե անտիկ մտածողության մեջ հաղթանակը հաճախ նույնացվում էր գերիշխանության հետ, ապա քրիստոնեական աշխարհայացքում հաղթանակը սահմանվում է խոնարհությամբ և ինքնանվիրումով: Այս առումով խաչը դառնում է խորհրդանիշ՝ բացահայտելով մի իրականություն, որտեղ ուժը կատարյալ է դառնում թուլության մեջ (հմմտ. Բ Կորնթ. 12:9): Այս գաղափարը խոր ազդեցություն է թողնում ինչպես աստվածաբանության, այնպես էլ քրիստոնեական քաղաքական և սոցիալական մտածողության վրա:

Ի վերջո, Նոր Կտակարանում պատերազմը լիովին չի վերանում, այլ վերածվում է գոյաբանական և հոգևոր դիմակայության: Քրիստոնյան կոչված է մշտապես պայքարելու ոչ թե աշխարհի դեմ, այլ աշխարհի ներսում՝ պահպանելով հավատարմությունը Աստծո Թագավորությանը: Այս պայքարը չունի աշխարհիկ հաղթանակների չափանիշներ, այլ առաջնորդվում է խաչի տրամաբանությամբ, որտեղ վերջնական հաղթանակը պատկանում է ոչ թե սրին, այլ սիրուն, ոչ թե բռնությանը, այլ հարությանը:

«Պատերազմ» նշանակող բառերի կիրառությունը Նոր Կտակարանում: Լեզվական տեսանկյունից՝ Նոր Կտակարանը հիմնականում օգտագործում է հունարեն պόλεμος (պոլեմոս) բառը՝ «պատերազմ» նշանակությամբ, որը համեմատաբար սահմանափակ քանակությամբ է և հաճախ ունի խորհրդանշական կամ վախճանաբանական երանգ: Օրինակ՝ «Լսելու եք պատերազմների ձայներ ու պատերազմների լուրեր» (Մատթ. 24:6) հատվածում πόλεμος-ը չի կոչում գործողության, այլ նկարագրում է անկման և անկայունության համաշխարհային վիճակը՝ որպես վերջին ժամանակների նշան: Այստեղ պատերազմը դառնում է ոչ թե նպատակ, այլ ախտանիշ:

Մյուս կարևոր բառը μάχη-ն (մախե) է՝ «մարտ, բախում», որը Նոր Կտակարանում հիմնականում վերաբերում է մարդկային հակասություններին և համայնքային պառակտումներին: «Այդ որտեղի՞ց պատերազմներ և որտեղի՞ց կռիվներ ձեր մեջ. ձեր այն ցանկությունների՞ց, որոնք կռիվ են մղում ձեր անդամների մեջ» (Հակ. 4:1) խոսքը ցույց է տալիս, որ μάχη-ն ունի բարոյահոգեբանական իմաստ՝ ծագելով մարդու ներսում գործող կրքերից: Այսպիսով՝ լեզվական շեշտադրումը արտաքին հակամարտությունից տեղափոխվում է դեպի ներքին պատճառաբանություն:

Առանձնահատուկ կարևորություն ունի στρατεύομαι / στρατεία (զորագրվել, արշավանք) բառը, որն օգտագործվում է բացահայտ փոխաբերական կերպով: Պողոս առաքյալը գրում է. «Ապրում ենք մարմնի մեջ, բայց մարդկային նկատումներից մղված չէ, որ պատերազմում ենք» (Բ Կորնթ. 10:3)՝ ընդգծելով, որ քրիստոնեական «պատերազմը» ունի այլ բնույթ և այլ միջոցներ: Այստեղ ռազմական տերմինաբանությունը ծառայեցվում է հոգևոր կարգապահության, ինքնակառավարման և աստվածային առաքելության նկարագրմանը:

Նոր Կտակարանում հանդիպում է նաև ὅπλα (զենքեր) բառը, որը կրկին վերաիմաստավորված է: «Պատերազմի մեր զենքերը մարմնավոր չեն, այլ Աստծուց տրված զորավոր զենքեր են՝ քանդելու ամրությունները» (Բ Կորնթ. 10:4) հատվածում ὅπλα-ն այլևս ֆիզիկական գործիքներ չեն, այլ հավատքը, ճշմարտությունը և արդարությունը: Լեզվական այս փոփոխությունները ցույց են տալիս, որ պատերազմական բառապաշարը պահպանվում է, բայց լիովին ենթարկվում է նոր՝ բարոյական և աստվածաբանական բովանդակության:

Վերջապես, Հայտնության գրքում պատերազմական լեզուն ստանում է ապոկալիպտիկ և սիմվոլիկ բնույթ: «Եվ երկնքում պատերազմ եղավ: Միքայելը և իր հրեշտակները կռվում էին վիշապի դեմ. վիշապը կռվում էր իր հրեշտակներով» (Հայտն. 12:7) խոսքը նկարագրում է ոչ թե պատմական իրադարձություն, այլ տիեզերական հակամարտություն բարու և չարի միջև: Այստեղ πόλεμος-ը ծառայում է որպես խորհրդանշական լեզու՝ արտահայտելու աստվածային դատաստանի և վերջնական հաղթանակի գաղափարը:

Այսպիսով՝ Նոր Կտակարանում «պատերազմ» բառը և դրա հարակից լեզվական ձևերը չեն խրախուսում ֆիզիկական բռնությունը, այլ գործածվում են որպես թեմատիկ և փոխաբերական միջոցներ՝ նկարագրելու մարդու ներքին պայքարը, համայնքային լարվածությունները և էսխատոլոգիական հույսը: Լեզուն պահպանվում է, սակայն նրա իմաստաբանական դաշտն արմատապես փոխվում է՝ ենթարկվելով խաչի և հարության աստվածաբանությանը:

Նահատակությունը՝ որպես հավատքի համար մղվող պատերազմի բարձրագույն ձև: Նոր Կտակարանում առանձնահատուկ նշանակություն ունի նաև վկայության (հուն.՝ մարտիրիա) գաղափարը, որն ստանում է պայքարի նոր ձև: Վկան ոչ թե մարտիկ է, այլ ճշմարտության կրող, որը պատրաստ է կյանքը տալու, բայց ոչ կյանք խլելու: Առաջին քրիստոնեական համայնքների պատմությունը ցույց է տալիս, որ եկեղեցին աճում էր ոչ թե ուժի կիրառմամբ, այլ նահատակության միջոցով, ինչը դիտվում է որպես չարի նկատմամբ հաղթանակի բարձրագույն դրսևորում: Այստեղ մահն այլևս պարտություն չէ, այլ մասնակցություն Քրիստոսի հաղթական զոհաբերությանը:

Քրիստոնեական ավանդության մեջ հավատքի համար պայքարի գագաթնակետը նահատակությունն է: Նահատակները չեն սպանում, այլ զոհվում են: Նրանք չեն հաղթում սրով, այլ հավատարմությամբ: Սուրբ Իգնատիոս Անտիոքացին գրում է. «Թող ես լինեմ Աստծո ցորենը, որպեսզի գազանների ատամներով աղացվելով՝ դառնամ մաքուր հաց Քրիստոսի համար»: Այստեղ պատերազմը վերածվում է վախճանաբանական հաղթանակի՝ մահվան միջոցով կյանքի ձեռքբերման: Հայ եկեղեցական ավանդության մեջ Վարդանանց պատերազմը հենց այս տրամաբանության մեջ է ընկալվում: Թեև այն ունի ռազմական պայքարի նկարագիր, բայց իր խորքային իմաստով հանուն հավատքի նահատակվելու պայքար է:

Բարոյական սահմանները և վտանգները: Բարոյական սահմանների խնդիրը սերտորեն կապված է նաև Սուրբ Գրքի պատմական և տեքստային հերմենևտիկական ընթերցման հետ: Տեքստի բառացի ընկալումը, առանձնացված փրկագործական պատմության ամբողջականությունից, կարող է հանգեցնել վտանգավոր եզրակացությունների: Աստվածաշնչյան պատերազմական պատկերները չեն կարող կիրառվել անպայմանական ձևով յուրաքանչյուր ժամանակաշրջանի և քաղաքական իրադրության մեջ: Դրանք կապված են հատուկ պատմական հանգամանքների, բարոյական իրավիճակների և աստվածային հայտնության աստիճանական զարգացման հետ: Հետևաբար՝ մեկնաբանական պատասխանատվությունը պահանջում է տարբերել պատմական իրադարձությունը դրա հավիտենական աստվածաբանական իմաստից:

Բացի այդ՝ քրիստոնեական աստվածաբանությունը հստակ տարբերություն է սահմանում արտաքին և ներքին պայքարի միջև: Նոր Կտակարանում հավատքի համար պատերազմը ստանում է հիմնականում հոգևոր բնույթ: Այս տեսանկյունից քրիստոնեական պայքարը դառնում է անձի ներսում ընթացող վերափոխման ընթացք՝ մեղքի, անարդարության և չարի դեմ պայքար: Այդ փոխակերպումն է, որ ապահովում է բարոյական սահմանների պահպանումը և կանխում հավատքի գաղափարի վերածումը քաղաքական կամ ազգային ագրեսիայի գործիքի:

Վերջապես, եկեղեցական ավանդությունը մշտապես ընդգծել է, որ հավատքի պաշտպանության բարձրագույն ձևը վկայությունն է՝ նահատակությունը, այլ ոչ թե պարտադրանքը: Ճշմարտությունը չի հաստատվում ուժով, այլ սիրո և զոհաբերության միջոցով: Սուրբ Հովհան Ոսկեբերանը գրում է. «Քրիստոսը հաղթեց ոչ թե սպանելով, այլ մեռնելով»: Երբ հավատքի համար պայքարը կորցնում է այս քրիստոսակենտրոն առանցքը, այն դադարում է լինել ավետարանական և վերածվում է աշխարհիկ գաղափարախոսության: Ուստի՝ բարոյական զգոնությունը, աստվածաբանական խորագիտությունը և հոգևոր խոնարհությունը մնում են այն չափանիշները, որոնցով պետք է գնահատվի հավատքի համար ցանկացած պայքար:

Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆ

Խրիմյան Հայրիկի կերպարը գրականության մեջ

↩ *Էջ 6*

Հիրավի, Թիֆլիսի եկեղեցիներում լսվեցավ մի նոր ձայն, ձայն Վասպուրական Արծվույն, որ մայր-Հայաստանի վերքերն է նկարագրում և նրա որդոց մեջ հայրենասիրության զգացմունք զարթեցնում: Այդպիսի ձայն հայոց եկեղեցյաց մեջ լսված չէր….

Ինչ որ ժողովրդի համար չկար, իսկ բանասերների համար մի ցնորք էր և հեքիաթ, հայ մարգարեի համար մի շոշափելի իրողություն էր, նա ցույց էր տալիս, որ հայությունը մի մեծ ժառանգություն ունի ստանալու, բայց որ չի ստանում, այդ միայն նրանից է, որ ինքն իրան ապօրինի զավակ է համարում և ոչ օրինավոր ժառանգ: «Պահանջեցեք ձեր ժառանգությունը, և կստանաք. բայց պիտի պահանջեք և ոչ խնդրեք, պիտի պահանջեք հրով ու սրով, զի «Արքայությունն երկնից բռնաբարի, և բռունք հափշտակեն զնա»: Աստված որ աստված է, առանց նահատակության մեզ արքայություն չի տալիս:

Նույնիսկ աստուծո որդին առանց խաչվելու չփրկեց մարդկությունը, ամենայն հայ, որ ապօրինի զավակ չի համարում իրան, պետք է իր արյունով գնե իր նախնյաց ժառանգությունը, և ո՞ր ազնիվ զավակը կփախչի իր մորն ազատելուց դարավոր գերությունից:

Հայրիկը սոսկ խրատ և հրահանգ չէր տալիս, նա առանց առակի ոչինչ չէր խոսում. նա ոչինչ չէր ասում, որի ապացույց մի կենդանի պատկեր և օրինակ չտար: Մերթ Վարդանին և Վահանին էր նկարագրում, մերթ Մուշեղին և Սմբատին: Հայոց բոլոր դյուցազունք, Հայկ ու Արամից սկսած, նրա քարոզի կենդանի պատկերներն էին: ….Շուտով թռցրին նրան դեպի իր բույնը՝ Վարագ, բայց նրա ցանած սերմերը Կովկասի հայերի մեջ խոր արմատ բռնեցին և ժամանակին պիտի ծաղկեին և պտուղ տային»:

Այս վերջին տողով Աղայանն ակնարկում և իբրև դեպքերին լավատեղյակ ժամանակից՝ վկայում է այն փաստի մասին, թե ինչպես ցարական գործակալների հետապդումների հետևանքով Խրիմյանը հարկադրված եղավ ավելի վաղ, քան ինքը ծրագրել էր, վերադառնալ Վարագա վանքը: Աղայանի համար Խրիմյան Հայրիկը միշտ մնաց իբրև օրինակելի ու տիպար գործիչ, որ «իր նմանը չունի նույնիսկ աշխարհականների մեջ»:

Ղ. Աղայանը Խրիմյանին ձոնել է նաև մի բանաստեղծություն՝ «Հայոց Հայրիկին» վերտառությամբ, որը, ինչպես վկայում են ժամանակակիցները, երգի է վերածվել ու երգվել 1893 թ. սեպտեմբերի 26-ին՝ նորաօծ Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Խրիմյան Հայրիկի պատվին՝ Ս. Էջմիածնի Մայրավանքի սեղանատան մեջ տեղի ունեցած պաշտոնական ճաշկերույթի ավարտին.

«….Հայրի՛կ, ո՛հ, Հայրի՛կ, քո քաղցր անվան լինեմ ես ղուրբան.

Սիրե՛մ այն հողը, որ ծնավ քեզ պես հրեշտակ պահապան:

Ո՛վ Տե՛ր, պահպանի՛ր դու մեր Հայրիկին, Քո հավատարմին.

Անպակաս արա մեր գլխի վրայից Նրա հովանին»:

Շարունակելի

Արման ՄԱԼՈՅԱՆ, պ. գ. թ.

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 2.03.2026 թ.
Տպաքանակը՝ 1015